№ 1 (142) XIV ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍ 1904

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

## 1903-1904

Նոր տարին սկսուեց ահագնադղորդ ցնցումներով։ Թնդանօթները որոտում են արդէն Ծայրագոյն Արևելքում և վառօդի հոտը տարածուելով՝ բարձրացնում է ամենուրեք ցաւագին ալաղակների մի անօրինակ ժխոր։ Վայրկեանը գերազանցապէս հանդիսաւոր է և տագնապալի։ Վաղուց, Խրիմի պատերազմի օրերից իվեր քաղաքական հորիզոնը այսքան չէր մթագնել, քաղաքակիրթ մարդկութիւնը չէր տեսել նմանօրինակ ընդհարում, այսքան մտատանջող և սարսափեցնող իր հաւանական հետևանքներով։

Տիսուր, չարագուշակ մարգարէութիւնները հրապարակի վրայ մրցում են իրար հետ և ընդհանուր տպաւորութիւնը այն է, որ ռուս-եւրոպական ներկայ պատերազմը չի մնայ կղզեացած, որ հրդեհը բորբոքուելով պիտի քարշէ ճակատագրապէս ուրիշ գործօններ, ուրիշ պետութիւններ դէպի համաշխարհային մրցակցութեան այդ ահեղ կրկէսը, ուր շահերը այնքան կենդանի են, այնքան խճողուած, այնքան հակամարտ։

Պատերազմ է. կուի թատրը ընդունել է արդէն իր սովորական կերպարանքը,—խորտակուող ու խորասուզուող նաւեր, մարդկային անհամար դիակներ, որոնք գնում են հանգստանալու ովկիանոսի պաղ անդունդներում... Հ ե ռ ա պ ա տ կ ե ր ը ը—աւելի ևս սարսափեցուցիչ... Դիակներ, անվերջ դիակներ...

Կապիտալիստական քաղաքակրթութեան զոհերն են դրանք, և ո՞վ գիտէ... գուցէ նոյն այդ քաղաքակրթութեան գ ե ր ե զ մ ա ն ա փ օ ր ն ե ր ը... Գուցէ հեռու չէ այն բաղձալի օրը, երբ համայնաւէր մի կ ա տ ա ս տ ր օ փ ա, տիեզերական մի վերիվայրում կ'աղատէ մի անգամ ընդմիշտ խաղաղասէր ժողովուրդներին իրենց ռազմատենչ հրամանատարներից, երբ այդպիսով բռնի ուժը կը հանդիսանայ — սօցիալիզմի մեծ թէօրետիկոսի արտայայտութեամբ—մ ա ն կ ա բ ա ր ձ բ ժ ի շ կ՝ հին, անարդար կարգերի համար, որոնք յղի են նոր կարգերով... Պատերազմի սկզբնաւորութիւնը ցոյց է տալիս արդէն, որ կաւէ ոտքերի վրայ յենուած „վեթխարին" մի շատ վտանգաւոր խաղ է սկսել „թզուկ" Եապոնիայի դէմ, մի խաղ, որ կարող է անդրադառնալ Ռուսաստանի ներքին ճակատագրի վրայ, մի խաղ, որ իր զարգացման հեռաւոր փուլերում կարող է դնել հրապարակի վրայ ռուս բռնապետութեան լինել-չլինելու հարցը...

* * *

Հորիզոնը մռայլում է, — ի՞նչ փոյթ ճնշուած, մորթոտուող ազգերին... Նրանք, որոնք այլևս ոչինչ չունին կորցնելու, բացի իրենց շղթաներից, նրանք վախ չունին նոյնիսկ համաշխարհային փոթորիկներից, ընդհակառակը, նրանք բնազդական համակրանք են տածում դէպի ամէն մի միջազգային բարդութիւն...

Անցած տարին երկու նահատակ ժողովուրդների՝ մակեդոնացիների ու հայերի կեանքում, սովորականներից չէր։ Բռնութեան այդ երկու դժբախտ զոհերը իրենց մոլեգին երերումներով կամեցան ցոյց տալ, որ մի անգամ ընդմիշտ ճանաչելը ընդունել են փրկութեան միակ բանաւոր ճանապարհը — զինուած կռիւը։

Մակեդոնական ապստամբութիւնը, որ ընդհանուր հիացմունք շարժեց, միանգամայն տարբեր էր նախկին շարժումներից։ Նա մասսային էր, օրհասական, կատաղի։ Հասարակական կարծիքը Եւրոպայում հիմնապէս փոխեց իր վերաբերմունքը դէպի մակեդոնացի կտրիճները։ Դեռ սրանից մի տարի առաջ նրանք „աւազակներ", սովորական ոճրագործներ էին՝ թէ պաշտօնական և թէ ոչ պաշտօնական Եւրոպայի աչքում. այժմ նրանք մեծարւում են, որպէս հերոսներ։ Կռիւը երկուստեք յուսահատական էր. Մակեդոնիան հանդէս էր գալիս իբրև պատերազմող կողմ և թշնամին կենտրոնացրել էր այնտեղ հարիւրհազարաւոր բանակ։

Դիւանագիտութիւնը՝ երկչոտ, անվստահ, ինչպէս միշտ՝ իզուր աշխատեց սարսափելի դրամայի հանդէպ կոյր ու խուլ ձևանալ։ Նրա համար մակեդոնական շարժումը „զանցառելի մի բանակութիւն" էր... Բայց ահա մի կողմից ապրստամբութեան յարաճուն թափը, միւս կողմից թիւրքական գազանութիւնները և Բուլգարիայի սպառնական դիրքը դուրս մղեցին նրան իր անտարբերութիւնից և ստիպեցին լրջօրէն ձեռք առնել կուող ժողովրդի արիւնոտ դատը։

Եւ արդի՞ւնքը... Ահա ամիսներ է, ինչ պաշտօնապէս սկսել է ռէֆորմների գործը և դեռ արդիւնքը անշօշափելի է։ Աւստրօ-ռուսական տխրահռչակ նօտայով եւրոպական թիւրքիան դրուած է երկու պետութիւնների գրեթէ բացառական հսկողութեան ներքոյ,—և հէնց այդ հանգամանքն է մակեդոնական ներկայ տագնապի հիմնական պատճառը։

Իբրև մի տեսակ հակազդեցութիւն այդ դրութեան դէմ, իբրև բողոք, հրապարակ եկաւ—տարաբախտաբար կարճ ժամանակով միայն — Անգլիայի առաջարկը՝ պահանջել սուլթանից Բերլինի դաշնագրի ամբողջական գործադրութիւնը թէ Մակեդոնիայի և թէ Հայաստանի վերաբերմամբ։

Անգլիական առաջարկը արմատական և միանգամայն արդար լուծումն էր տալիս, այն է՝ սահմանել Մակեդոնիայի համար նոյնպիսի մի ռէժիմ, որպիսին գոյութիւն ունի Լիբանանում—քրիստոնեայ կառավարիչ, ընտրուած սուլթանից, պետութիւնների համաձայնութեամբ, վարչական ու տնտեսական անկախութիւն, տեղական զօրք և ն։

Այդ բոլորը շատ լաւ էր, բայց քնաւ չէր մտնում Աւստրիայի և Ռուսաստանի հաշիւների մէջ։ Մակեդոնիայի ինքնավարութեան վրայ խաչ դրին նրանք և առաջ քշեցին „կիսամիջոցների“, ողորմելի պալիատիվների քաղաքականութիւնը, որից տառապում է այսօր թշուառ Մակեդոնիան, մարդկութեան խիղճը և նոյնիսկ միջազգային խաղաղութիւնը։

Աւստրօ-ռուսական ծրագիրը ևս մի շօշափելի վաստակ էր, եթէ գործադրուէր։ Համիդի կառավարութիւնը ամէն տեսակ խոչընդոտներ է դնում։ Ամենաչնչին պատրուակներով նա ձգձգում է, օրինակ, ժանդարմերիայի կազմակերպութեան գործը։ Ռէֆօրմների ընդհանուր վերահսկողը Համիդի մարդն է և նրա կամքն է գերակշռողը։ Նրա երկու եւրօպացի օգնականները, ինչպէս և ժանդարմերիայի կազմակերպող իտալացի սպան՝ առ այժմ անզօր են կացութեան մէջ էական փոփոխութիւն առաջ բերելու... Այնինչ ռէակցիան իշխում է թեւատարած, հալածանքները կրկնապատկւում են, ասիական Թիւրքիայի բանտերն ու աքսորատեղերը շարունակում են լցուել մակեդոնացիներով և բուլգարներով, որոնք կրում են մի սոսկալի նահատակութիւն...

* * *

Որպիսի՜ փոթորկոտ թւական անցկացրինք։ Հայրենիքի մեծ հատուածներից մինը, Անդրկովկասը, ենթարկուեց անակնկալ ուծանր փորձութեան։ Մի նոր դարագլուխ բացուեց նրա համար՝ կեանքի ու վերածնութեան մի դարագլուխ՝ որ չպիտի ողբանք, այլ պիտի ողջունենք։ Հայի վերաւոր գոյութիւնը մի փոքր ևս տրորուեց, մեր ծով տառապանքին մի քանի հարուածներ ևս աւելացան, բայց նոյն այդ հարուածներից աճեց, մեծացաւ հայութեան ոգին, պատուի գիտակցութիւնը, ազատութեան տենչը։

Կեանքը մի զարմանալի հիւսուածք է ամենայլազան պատահարների, ուր յաճախ դժուար է զանազանել չարիքը բարիքից... Սարսափելի է բռնաւորի խարազանը, բայց մինչև որ նա չի հարուածում, չի էլ զգաստանում մրափող ստրուկը, չի էլ արծարծւում այն սուրբ, փրկարար ատելութիւնը, որ խթանն է տիեզերական ազատագրութեան։ Կովկասեան հայութիւնը կանգնած էր անկման անդնդի ծայրին. մի առնական թռիչքով նա յայտնուեց անդնդի հակառակ ծայրին։ Նա այլասերուում էր, անպատիւ կորչում,—այժմ նա վերստին ճանաչեց ինքն իրեն, ուշքի եկաւ և կամայ-ակամայ ընդունեց, ի-բացրեց մի նոր եղանակ՝ մտածելու, զգալու և գործելու...

Տասնեհինգ տարուայ յեղափոխական պրօպագանդը ապարդիւն չէր անցել։ Տասնեհինգ տարի անխոնջ քարոզելով յօգուտ տաճկահայ եղբայրների ազատութեան, յեղափոխական կազմակերպութիւնը պատրաստել էր կովկասեան հողի վրայ մի փառաւոր սերունդ, որը անցեալ աշնան՝ հուժկու բռնկումներով փոթորկեց մրթնոլորտը և մինչև օրս էլ սարսափի մէջ է պահում երկրի դահիճներին։

* * *

Ոչ պակաս ահաւոր էր կացութիւնը Թիւրքահայաստանում։ Նախորդ տարիների ճգնաժամը ընդունել էր այնտեղ օրհասի կերպարանք։ Թիւրքական դաւերի կենտրոնն էր Սասունը։ Այնտեղ ստեղծուել էր մի նոր դրութիւն։ Այնտեղ, բարձրաբերձ լեռների վրայ, հայ յեղափոխական բանակը պարզել էր իր դրօշը։ Պէտք էր ոչնչացնել նրան։ Դիւրին գործ չէր այդ։ Վաղեմի մեթոդով առաջ գնալ, դաւերով, նենգամիտ խոստումներով ծուղակի մէջ ձգել լեռնականներին—անհնարին էր։ Եթէ հնարաւոր էլ լինէր—անպատեհ էր։ Նոր-նոր սպանդանոցներ սարքել Սասունի առաջին ջարդի տասնամեակին և նորից լսեցնել աշխարհին նրա ցնցող ձայնը,—դա մի չափազանց կնճռոտ խնդիր էր, մանաւանդ մի այնպիսի ժամանակ, երբ Եւրօպայում հսկայական միթինգներ էին գումարւում յօգուտ հայերի, ընդդէմ սուլթանի մարդասպան քաղաքականութեան։

Բայց միւս կողմից էլ Համիդի կառավարութիւնը չէր կարող մարսել, որ իր աչքերի առաջ, բարձրում, համարձակ բուն են դրել ֆէդայիները և իրենց անառիկ դիրքից տիրում են շրջապատին։ Ծանր, անպատեաբեր էր իրողութիւնը—և թշնամին քալեց։

Եւ Հասան Սասունի „կրակ ու բոցի օրերը“։ Յունիսի վերջերին կանոնաւոր զօրքերի բանակը տեղաւորուեց Շենքը գիւղի մօտ։ Բաղէշի կուսակալութեան, Մուշի միթէսէրիֆութեան կողմից՝ պատուիրակներ, զօրապետներ ցրուեցին քիւրդ աշիրէթների մէջ նրանց իրար հետ հաշտեցնելու, կրքերը բորբոքելու և Սասունի վրայ թափելու համար։

Յուլիսի վերջերին հաղորդակցութիւնը խզուեց Սասունի և Մուշի միջև։ Կառավարութիւնը միջոցներ ձեռք առաւ՝ բաժնելու յեղափոխական-զինուորական խումբը հայ ժողովրդից։ Իսկ ժողովուրդը ձեռք-ձեռքի տուած յեղափոխականների հետ, քաշուեց լեռները, դիրք բռնեց Անտոքի ու Գէբինի դագաթներին և պատրաստուեց կռուի։ Բաղէշի և Մուշի իշխանութիւնները իրարու անցան։ Թշնամին մօտեցաւ, ստուար բանակով տեղաւորուեց մէկ-երկու ժամուայ հեռաւորութեան վրայ, մնաց այդ դիրքում ամբողջ երկու ամիս, փորձեց գրոհ տալ, բայց տեսաւ ապստամբների

պաղ վճռականութիւնը, վարանեց, հեռացաւ, իր թոյնը թափելով դաշտի խաղաղ ազգաբնակութեան վրայ։

Դաւը վիժեց։ Հայ արծիւները մնացին թառած իրենց բներում։ Սասունը մնաց անկախ վիճակում... Բայց թշնամին միշտ հետամուտ է։ Առաջիկայ գարնան նա կը վերսկսէ կազմակերպուած գրոհը. թիւրքական ռազմագիտութիւնը ի գործ կը դնէ իր բոլոր հնարքները՝ միանգամ ընդմիշտ ընկճելու ըմբոստ լեռնականներին և ջնջելու ֆէդայիների հետքը։

Հեռու տեղերում, կայսրութեան խուլ անկիւններում հայ յեղափոխականների երևան գալը աւելի ևս բորբոքում է մեր թշնամիներին... Ցայտնի է, որպիսի սարսափ են ազդել տաճիկների և քրդերի վրայ Բասենի վերջին ընդհարումները, ուր 150 հոգուց բաղկացած ֆէդայիների բանակը դիմագրաւել էր թիւրք կանոնաւոր զօրքին և հազարաւոր խուժանին, թողնելով կռուի դաշտում 500-ի չափ թշնամի դիակներ...

Ֆէդայու հռչակը, նրա ժողովրդականութիւնը աճում է օրէցօր, ներշնչելով թշնամուն և՛ երկիւղ և՛ պատկառանք։ Հայութեան դարևոր ոսոխ քիւրդը սկսում է սիրով դիմաւորել նրան, տեղ-տեղ նոյնիսկ զինակցել նրա հետ։ Սասունի վերջին անցքերի ժամանակ քրդի հմտակրութիւնները բացայայտ էին։ Մի քիւրդ ցեղապետ էր — Գոբբէ Շէրիֆ-խան — որ նշանակուած էր մերոնց կողմից իբրև առաջապահ՝ հսկելու և պահելու Անտոքի ճանապարհը։

Որքա՜ն ծանրակշիռ մի հանգամանք է յարաբերութիւնների այդ յեղաշրջումը, որ, յուսով ենք, ժամանակի ընթացքում պիտի ընդարձակուի և պիտի շեշտուի...

Վաղուան օրը պատած է ահաւոր խորհրդաւորութեամբ։ Ամպերը քանի գնում թանձրանում են հորիզոնի վրայ. Մակեդոնիան պատրաստւում է, Բուլգարիան պատրաստւում է, Սասունը կանգնած է նոր փորձութեան առաջ. վա՜յ մեզ, եթէ անպատրաստ գտնուինք վաղուան փոթորկի դիմաց...

---

## ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԶԱՆԳ

Ազատութեան զանգ, դու վեհ զօրանջէ
Կովկասեան վսեմ, վէս բարձրունքներից.
Ինչպէս մրրիկ շաչէ, շառաչէ
Մինչև սիգապանծ Ազատն-Մասիս։
Անհուն վրէժի և ըմբոստացման
Եւ բուռն ցասման բարբառը հնչէ.
Ժողովուրդների անկախ, ինքնիշխան՝
Դաշն ազատական խրոխտ զօրանջէ։
Լեռներից խրճիթ, և ձորերից ձոր,
Եւ սրտերից սիրտ ձայնդ թող թռչի.
Եւ ընդվզումի պատգամդ հզօր
Ցաւիտեան անլուռ երբէք թող չհանգչի։
Ըմբոստ ոգիներ, թև առէք, հասէք,
Եւ զանգահարենք ամուր, միհամուռ.
Զանգն ազատութեան զանգահարեցէք
Կովկասի համար հանուր, ընդհանուր։
Եւ որոտա՛, զանգ, և դու արթնացրու
Դարևոր նիրհից Մասիսն ու կազբէկ.
Թափ տուր թևերդ, արծիւ լեռներու,
Քնած առիւծնե՛ր, բաշերդ թօթուէք։
Եւ բաւական է անարգ լծի տակ
Մենք ստրուկ մնանք՝ ձեռներս շղթայ.
Կապանք փշրելու մեզ թոյն ու կրակ,
Մեզ ուժ և կորով, վրէժ որոտա՛.
Եւ մեզ ամէնքիս մռնչա՛, կոչէ
Մահուան ու փառքի դաշտը պայքարի.
Սրբազան ռազմի կոչնակը գոչէ
Ընդդէմ բռնութեան, չարի և ցարի։
Հրաբուղխների դու վսեմ երկիր,
Եւ ծովերից ծով հուժկու որոտա՛
Քո սուրբ ոտքերով և զարկ, — և ժայթքիր
Լիրբ ցարի գլխին, — աշխարհը թնդայ։
Եւ ազատութեան նորոգ արևի
Ոսկի ներքողդ, Զանգ, զարթ հնչէ.
Բիւր դագաղներից ազատ Կովկասի
Սուրբ եղբայրութեան տօնին մեզ կանչէ։

ԱՐՏԱՒԱԶԴ

---

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՆԱՄԱԿՆԵՐ ՎԱՆԷՆ

I

30 Նոյեմբեր, 1903

*Հայաջինջ մեթոդը.*—Կառավարութիւնը տարէց տարի նրբացնում է իր քաղաքականութիւնը՝ Հայաստանը պարպելով բնիկներից և լեցնելով որջերի մէջ, արջերի հետ ապրող քրդական աշիրեթներով։ „Սալաֆ"-ի տուած աւերումները անհկարագրելի են, իսկ այս վերջին ծրագիրը՝ զուտ հայաբնակ գիւղերը քիւրդերով լեցնել՝ արդէն չափազանց է և ժողովրդի համբերութիւնից վեր...

„Սալաֆ"-ը կառավարական վաշխառուական կեղեքման մի ձևն է, որ թիւրքի մենաշնորհն է միայն։ Կառավարական հարկահաններ թուով 6-7 հոգի (կառավարական հարկահան և զինուորներ) կը մտնեն գիւղ, կը ներկայացնեն նախկին տարիների հարկային պարտքերի հաշիւը (ներկայումս չկայ գրեթէ մի գիւղ, որի վրայ դիզուած չլինեն իրենց հրէշային տոկոսներով նախկին տարիների ապառիկները) և կըսկսին շրջել։ Մէկը միւսի ետևից կալում դիզուած ցորենների շեղջեր անհետանում են պարկերի մէջ. դեռ նոր ծածկուեց պարտքը, դրանց յաջորդում են ներկայ տարւայ հարկերը. ո՞ր տեղից պիտի առնեն, քանի որ կալը դատարկուեց, հարկահաւաքներ հրացաններով ու մտրակներով կը լեցուեն տուներ և մի րոպէի մէջ կը դատարկեն տունը ամաններից և ցնցոտիներից. այդ իհարկէ չի գոհացնում, և ահա այդ րոպէին կառավարական հարկահանների նոյն խմբից „գթասիրտ" մի պաշտօնեայ առաջարկում է դրամ, որ, ստիպուած, վերցնում է գիւղացին միւս կալին տոկոսով վճարելու պայմանաւ.—սա է սալաֆը։

Հայոց Ձորի Արատենց գիւղի վրայ դեռ 95 թուից հարկերի ապառիկներ են դիզուած։ „Այս տարի — պատմում է գիւղացին—եկան գիւղ, մտրակի ու զօնդաղների տակ

տուին գիւղացոց և հաւաքեցին, յայտնելով, որ այս անգամ պիտի վճարեն բոլոր պարտքը և այս տարւայ տուրքերը։ Սուգ, շիվան ընկաւ գիւղ. հաւ, ոչխար կահկարասիք, եղած հացը, բոլորը, բոլորը տարան և դեռ պարտքի կէսն անգամ չվճարուեց. հարկահաւաքները սալաթ տուին հաշուելով բերքը հետևեալ գներով. մի չափ ցորենի համար, որ արժէ 25-28 ղրշ., կը վճարեն 5 ղրշ., մի չափ կտաւատի համար, որ արժէ 30-35 ղրշ., կը վճարեն 14 ղրշ., մի չափ գարիի համար, որ արժէ 15-20 ղրշ., կը վճարեն $2^1/_2$ ղրշ։ Այդ հաշուով նրանք տուին դրամ։ Զանցած մի քանի օր՝ հարկահաւաքների մի նոր խումբ եկաւ. գիւղացիների յուսահատութիւնը ծայրայեղ էր. նրանք միջոց խնդրեցին և դիմեցին կառավարութեան ցորենի փոխառութեան համար։ Կառավարութիւնը հրամայել էր գիւղի միլթազիմին տալ 100 չափ։ Ցորենը դեռ նոր ստացած, ահա եկան հարկահաւաքների երկու խումբն էլ. առաջինը կը պահանջէր իր տուած դրամը, երկրորդ՝ հարկը... Եւ այժմ, հարկահաւաքների երկիւղից՝ գիւղացիք թողել են իրենց տուն-տեղ, ընտանիքը մերկ, անօթի ու թշուառ, փախել են հեռաւոր գիւղեր, քաղաքներ և կաչաղ են դարձել։ Այդ փախչողներից մէկին այժմ բռնեցին և երկու հրացանի զօնդաղ կոտրելով վրան՝ բանտ նստեցրին։

Նոյն գիւղի հարուստներից Յովհաննէսեան Պօղոս, որ 95 թւին մեծ կարողութիւն ունէր, այսօր բացի այդ բոլորը կորսնցնելուց, հազիւ կարողանում է օրական պարէնը հոգալ, այսինքն ունենալ ցամաք հաց և թոնրի ցնցոտիներ։ „Դու կը կարծես, թէ նա եկամուտ չունի՞— կը գրէ ինձ ընկերս—300 չափ ցորենի եկամուտ ունի, բայց դեռ կալի մէջ դիզած՝ հարկահաւաքները սրբել են բոլորը և 100 չափ ցորենի և 15 չափ կտաւատի պարտք են գրել վրան. և կալը վերջացնելուց յետոյ նրա ընտանիքը՝ գործիքները հաւաքած մղկտալով առանց մի հատիկ ցորենի հեռանում է կալատեղից։ Մեր գիւղը 1,600 չափ եկամուտ ունի, որից մնում է միայն 120 չափ, այդ էլ միայն երկու տան սեփականութիւնն է“։

Քրիստոնեայ ազգաբնակութեան ոչնչացման և տնտեսապէս քայքայելու ու գաղթականութիւն առաջ բերելու համար է, որ կառավարութիւնը հնարել է հայ գիւղերում քիւրդեր բնակեցնելու ծրագիրը։ Հայոց Զորի արդէն մի քանի գիւղերում, որոնք զուտ հայաբնակ էին, մօտերս եկել ու գրեթէ զօռով բնակութիւն են հաստատել քիւրդ ընտանիքներ։ Հէնց մի օրինակ բաւական կը լինի պարզելու։ Հայոց Զորի Քռէլ գիւղում ահա 2-3 ամիս է բնակութիւն է հաստատել մի քիւրդ Ռավշան բէկ. նա ինքը վատ քիւրդ չէ, բայց խաղաղասէր աւազակներից է, որոնք ապագայի փայլուն երազներով գրաւում են կառավարութեան պարզած հեռանկարից և մտնում են հայ գիւղեր։ Սկզբում նա իր ոչխարն է ուղարկել գիւղ պահել տալու, ապա ինքը իր մի կնոջ և մէկ երկու ծառայի հետ եկել է այնտեղ. իսկ այժմ արդէն բերել է ամբողջ ընտանիքը. ամէն օր նա գիւղացոց առանձին-առանձին շողոքորթում է, խոստումներով և հովանաւորութեամբ գրաւում է, որպէս զի մի հանրագիր պատրաստել տայ ու ստանայ վարելահողեր... Այդպէս է Վասպուրականի գրեթէ բոլոր հայաբնակ գիւղերի և Ալճաւազ, Բերկրի, Հայոց-Զոր, Գաւաշ ևն գաւառների վերաբերմամբ դծուած ծրագիրը։

*Զինուորների բռնութիւնները.* — Զինուորակոչութիւն է։ Տրապիզոնից, Երզնկայից, Սամսոնից և հեռու նահանգներից հարիւրաւոր վայրենի, աւազակ տաճիկ „կուռաներով“ (նորակոչ զինուոր) լեցուած են գիւղեր և քաղաք։ Գիւղերը անասելի կամայականութեան են ենթարկուած. էլ ոչխար, ձու, հաւ, իւղ, չէ մնացել այնտեղ։ Բաժանուած երկերկու, երեք-երեք, իւրաքանչիւր տան, նրանք ինչ՞ը ասես չեն կատարում, ի՞նչ լիրբ արարքներ գործ չեն դնում հայ նահապետական սուրբ օջախում... Անցեալ շաբթու տասնեակ գողութիւններ պատահեցին քաղաքում։ Բացի տան իրեղէններից ճերմակեղէն, լաթեր և կապերտներ գողանալուց, շուկայից արձակ-համարձակ օր-ցերեկով կտորներ են գողացել, հագուստներ են յափշտակել, որի համար և մի քանի հայերից փառաւոր դասեր են առել։

* * *

Նորերս Ալճավազի յայտնի կրեսոս Քեօռ-Հիւսէյն փաշայի ամբաստանութեամբ՝ ձերբակալեցին այդ փաշայի աներոջ տղայ Ալի բէկին։ Վերջինս մեղադրւում էր իբր յեղափոխական և մասնակից հայ յեղափոխականների շարժման։ Ամբաստանութիւնը հիմնուած է այն բանի վրայ, որ Ալի բէկը իր հայ հպատակների հետ մարդավայել կերպով կը վարուի։ Ալի բէկի եղբայր Էմին փաշան (Կոճերին գիւղից) իսկոյն դիմել և աղաչել է եղբօր։

* * *

*Լրտեսութիւնը.* — Լրտեսների մի ահագին լեգիոն կայ այս կողմերում։ Ցանկարծ տեսնում ես երէկւայ վստահելի և անկեղծ մարդը այսօր լրտես է դառել։ Տաճիկ և հայ կօմիսէրներ ու փոլիսներ ազգասիրաբար կաշխատեն, փափուկ կերպով կը մօտենան, կը բարեկամանան սրա-նրա հետ, երբեմն թեթև „լաւութիւններ“ կ՚անեն և ահա „երախտագէտ“ հայեր փոխարէնը կըսկսին հատուցանել, երբեմն գիտակցաբար, երբեմն էլ յիմարաբար. էլ չգիտեն, որ յեղափոխութիւնը ևս երախտագէտ է և լիովին կը հատուցանէ վաղ թէ ուշ...

*Ջան-բէզար.* — Վաղուց չէ, ինչ կրօնամոլ քիւրդերից կազմուած է „Ջան-բէզար“ անուանուող կուսակցութիւնը. անունը ինքնին բացատրում է կուսակցութեան սկզբունքը։ Անդամները արիւնարբու աւազակներից, կրօնամոլ աղաներից և բախտախնդիր քիւրդերից է կազմուած։ Գազանների այդ վոհմակը կը գործէր Մշոյ դաշտում, բայց փոքր առ փոքր մեր կողմերն էլ են երևացել։ Ալճաւազ գաւառում նրանք սկսել են աւերումներ գործել։ Քիւրդ բէկեր, գայմագամներ դրանց գործիք են շինել իրենց ձեռքում՝ հարկեր հաւաքելու և կեղեքելու ժողովրդին։ Կարծում եմ այդ կուսակցութիւնն առաջ եկաւ այն բանից, որ կառավարութիւնը վերջերս լուրջ երկիւղ կրելով հայ-քրդական յարաբերութիւններից, շատ տեղեր զինաթափ արեց համիդիէներին և քիւրդ ազգաբնակութիւնը. իբր հետևանք՝ երևան եկան ահա դրանք, որոնք կաչաղ կապրին և չեն ենթարկուում օրէնքին։ Ջանբէզար բառը երևի ջան-ֆէդայու ճուտն է...

*Հարկահանութեան նոր ծեւ.* — Անասունների վերաբերեալ նոր հարկային օրէնքը գրգռել է բոլոր քրդերին։ Ինչպէս յայտնի է, քրդերը մեծ մասամբ պարապում են խաշնարածութեամբ և տաւար պահելով. այժմ ամէն մի խոշոր տաւարի համար պիտի վճարեն 10 ղրշ., որը շատ անսովոր է նրանց համար, քանի որ ցայժմ նրանք չեն ենթարկուել հարկերի։ Կառավարութիւնը նրանց պատ-

ճառած վէրքի մռմուռը կը մեղմացնէ նրանով, որ ամէն. օրեայ դավաթ-օրգիաներով կը թմրեցնէ նրանց պարա-գլուխների միամիտ ուղեղները և Պոլսէն բերել տուած պոռնիկ կանանց տոփոտ գրկերի մէջ մոռացնել կը տայ նոր հարուածները. իսկ ամբողջ քիւրդ ժողովրդի սանձը արդէն տրուած է ուրէ Էլ-աղասու կամ շէյխի ձեռքը...

## II

2 յունուար, 1904

*Ինքնապաշտպանութեան գեղեցիկ օրինակ.* — Վայրենի քիւրդն էլ սկսել է հային այլևս հաւ չճանաչել և հայն էլ իր զայրոյթը սկսել է արտայայտել դրական կերպով։

Վանի մօտ գտնուող Թեմուր գաւառի Եկմալ գիւղի ռէս Գէորգի տունը նորերս պաշարում են 8 համիդիէ քիւրդ և 2 հայ (տեղացիներից), զինուած մարթինի և բերդան հրացաններով։ Ռէս Գէորգը այդ օրը իբր 800 լիրա է ունեցել և վերոյիշեալ երկու հայերը գրգռելով շաւէցի համիդիէ աւազակ քիւրդերի ախորժակը, յարձակւում են ռէսի տան վրայ։ Ռէսը տանն է լինում իր եղբայրների, որդիների և մի քանի ազգականների հետ։ Դուռը ծեծում են. և ներսի հարցին լսւում է պատասխան՝ „բաց, անցորդ ենք“։ Դուռը դրսից հրում են. ռէսը կասկածում է և մօտենում է դռան որ բանայ, երբ դրսից 8-10 հրացաններ են արձակւում։ Բարեբախտաբար ռէսը ժամանակին մի կողմ է թռչում, մեալով անվնաս։ Տան մէջ եղողները սաստիկ զայրացած ու առանց վախի նշոյլի՝ ձեռք են ձգում պատահած փայտեր, թիեր և այլն, յանկարծակի դուռը բանում են և յարձակւում զինուած աւազակների վրայ։ Վերջիններս յանկարծակիի եկած տնից դուրս թռչող բազմութիւնից՝ փախչում են։

Ռէսին աջողւում է ջարդել մի քանիսին փայտերով և բռնել երկուսին, որոնց ձեռքից հրացանները խլելով ջարդում են և հարցնում, թէ ի՞նչ էին ուզում իրենցից։ Գերի քրդերը պատմում են, որ եկել էին փողերը տանելու. իրենց առաջնորդել են երկու հայեր։ Ռէսը պահանջում է դրանցից այն երկու հայերին, հակառակ դէպքում սպառնալով կառավարութեան յանձնել։ Գերիները ուրախութեամբ ընդունում են պայմանը և գոռում են փախչող քիւրդերին, որ երկու հայերին ետ ուղարկեն։ Ընկեր քիւրդերը ստիպում են մէկին և ուղարկում են, իսկ միւսը փախչում է։ Ռէսը հային կալանաւորում է, առանց սակայն ազատելու քիւրդերին։ Փախչող քիւրդերը տեսնելով, որ ռէսը դրժեց իր խոստումը, հեռից կամենում են գնդակահարել, սակայն գնդակը փոխանակ ռէսին դիպչելու, զարնում է ընկեր քիւրդի կրծքին ու ծանր վիրաւորում։ Այդ աղմուկին վրայ են հասնում զօրքեր, որոնք բանտից այդ օրեր փախած քիւրդերին փնտրելու ելած են եղել. պատմւում է բանի էութիւնը, որից յետոյ զօրքերը կապում են քիւրդերին և մի հային, ձգում սայլի վրայ (ոտքով գնալ չկարողանալու համար. ռէսը սաստիկ ջարդել էր նրանց) և շրջապատած առաջնորդում են քաղաքի բանտը։

*Հայ սրիկաները.* — Այդ է ահա յաճախակի դէպքերից, կատարուած ապօրինութիւններից մէկի պատկերը։ „Ցունը ներսէն կը քանդի“,—շատ դէպքերում մեր մի քանի ստրկահոգի, լիրբ սրիկաների ձեռքով են կատարուել և կատարւում սպանութիւններ, աւազակութիւններ։ Անձնական ստոր կրքերին շատ անգամներ է զոհւել անմեղ ժողովուրդը։ Բայց յեղափոխութիւնը պիտի կարողանայ կտրել այդ Ցուդա-սրիկաների արմատը և միանգամ ընդմիշտ ազատել ժողովուրդը քրդից ու տաճկից էլ աւելի վնասակար՝ այդ ստոր հոգիներից...

## ՆԱՄԱԿ ՄՈՒՇԷՆ

1 նոյեմբեր, 1903

*Սահմանները.* — Այս անուան տակ Բաղէշի մէջ մի ձիաւոր կամաւոր խումբ կազմեց կառավարութիւնը, թիւրք ամենայետին տարրէն բաղկացած, որի պաշտօնն է՝ պտտիլ նահանգին մէջ և արգիլել ֆէդայիներու անցքը դէպի Սասուն։

Ֆէդայու ոտքը հայ գիւղերէն կտրելու նպատակաւ, կառավարութիւնը նաև հայերուն բռնի վարձել տուաւ քիւրդ և թիւրք պահնորդներ, ամէն մէկ գիւղի համար։ Անոնց պաշտօնն է խիստ կերպով հսկել և լրտեսել յեղափոխական գործողութիւնները։ Սակայն պէտք է ըսել, թէ այդ բոլորը աւելի կը նպաստէ յեղափոխականներու գիւղեր մտնելուն։ Կառավարութիւնը վստահ ըլլալով իր մարդոց վրայ, կը բաւականանայ անոնց տեղեկագրովը, իսկ յեղափոխականը կարող է անոնցմէ անտեսանելի մուտ գործել իր ուզած վայրը։ Զուր ըսուած չէ՝ „գողը տնէն ըլլայ, եղն երդիքէն կը հանէ“...

*Բանտարկութիւններ.* — Վերջերս մի նոր մեթոտ ստեղծուած է բանտարկութեան և կեղեքումի։ Կը բանան գիւղացիներու արձանագրութեան տոմարները, մէջէն կը վերցնեն մի որևէ անուն — օրինակ, Արշակ, — քանի մը ոստիկաններ կը ղրկեն գիւղ՝ հարցնելու համար, թէ այսինչ անունով քանի՞ անձ կայ իրենց գիւղի մէջ։ Քանի հատ որ գտնւի, կը հաւաքեն կը տանին կը բանտարկեն։ Ապա կաշառք առնելով, կը թողուն։ Կարգը կուգայ մի այլ անուան՝ օրինակ Պողոսի, ու այսպէս անվերջ կը շարունակւի։ Գեղեցիկ միջոց դրամ շահելու...

*Յեղափոխութիւնը.* — Այս ամենուն մէջ մխիթարական երևոյթն այն է, որ ճնշուած ժողովուրդը օրը օրին կըզգայ թէ իր փրկութեան միակ միջոցը կռուելու մէջ է։ Յեղափոխութիւնը քաջալերուած ժողովրդի վառ զգացումներէն, կը յառաջանայ։ Նա այլևս երէկուանը չէ, այնքան ուժովցած է, որ ակնյայտի կը գործէ։ Նոյնիսկ թիւրքերը կը խօսին թէ, Սասնոյ մէջ յեղափոխականները բանակ դրած են Անտոր լեռան բարձունքներուն վրայ...

Կ'ապշին թիւրքերը, կը զարմանան այս յանդգնութեանը։ Անոնք միշտ տեսած էին յեղափոխականը իր գաղտնի դերին մէջ, միշտ թագնուած ու ժրաջան, միշտ աներևոյթ ու գործօն, իսկ այսօր դերը փոխուած է, նա հրապարակ եկած է, ափաշկարա կը գործէ, իսկ օսմ. կառավարութիւնը իր ուժերէն վեր կզգայ նրան վնասել։ Դեռ շատ ատեն առաջ չէր, երբ քիւրդ մը ֆէդայի մը տեսնէր՝ ամբողջ գաւառ մը իրար կը խառնուէր, աշիրաթներ ոտքի կը կանգնէին, հայը երկիւղի տակ կը սմքէր. իսկ այսօր քիւրդը կը տեսնէ ֆէդային ու աչքը կը գոցէ կ'անցնի։ Կառավարութիւնը աշիրաթները կը հրաւիրէ ֆէդային դէմ կռուի գալ, անոնք կը մերժեն։

Փոխուած են ժամանակները։

Թիւրք մը կը պատմէր թէ, վերջերս Բաղէշի կուսակալը նկատի ունենալով ֆէդայիներու արձակ համար-

ձակ նիստ ու կացը Սասնոյ անյաղթ լեռներու կատարին, կը հեռագրէ Բ. Դուռ և հրաման կը խնդրէ գնալ անոնք ջնջել, այդ նախատինքը բառնալ օսմանեան հըզօր. . . կառավարութեան ճակտէն։ Դռնէն կը հեռագրուի. „Եթէ կրնաք գործը յաջողութեամբ կատարել 24 ժամու մէջ, բոլորը ջնջել, դեռ լուրը Եւրոպա չհասած՝ յարձակում գործեցէք“։ Կուսակալը կը պատասխանէ. „Ոչ 24 ժամեան և ոչ ալ 24 օրուան մէջ կրնանք յաղթել անոնց“. . .

## ՆԱՄԱԿ ՊԱՅԱԶԷԳԷՆ

5 դեկտեմբեր, 1903

Բասենի դէպքի առաջ բերած իրարանցումը մեծ էր. կառավարութիւնը ամէն կողմ զօրքեր փոխադրեց, համիդիէներ զէնքի կանչեց, աչքի ընկնող կենտրոններում զօրքերի թիւը աւելացրեց։ Դրա հետ միասին ժողովրդի բոլոր խաւերում տարածեց սարսափ ու բռնութիւն։ Հայ տարրը մշտական սպառնալիքի տակ է։ Շարունակ թալանում կամ ծեծում են։ Կարինից եկող պայազէդցի և ալաշկերտցի բազմաթիւ վաճառական հայեր ծեծ են կերել, գոհ են որ չեն սպանուել։ Իւչքիլիսէի վանքի զօրքերի թիւը առաջ 30 էր, այժմ 60-ի չափ է։ Նրանք տեղաւորուել են հայերի տներում. . . Ձեն թողնում, որ գիւղացին իր կամքով իր գործը տեսած՝ տուն վերադառնայ. նրանց հաւաքում են դաշտի միջից՝ դեռ արևը մայր չմտած՝ բերում են ու հաւաքում գիւղում, նրանք ամենևին չեն կարող շարժուել, զանազան պատճառներ են բերում, ծեծում են, տուգանքի են ենթարկում կամ գիշերները իրենց հետ են վերցնում ման ածելու համար, տալիս են նրանց ծանրութիւններ, որ վերցնեն, գետեր ու ջուրեր շալակած անցկացնեն. . .

Վանքի զօրքերը վերջերս բռնում են Հարօ անունով մի հայի, որ վանքին մօտիկ Բօղիի գիւղացիներից էր, գիշերը դուրս են տանում գիւղից մի ինչ որ պատճառով, վրճռում են սպանել, ի վերջոյ բաց են թողնում և վերցնում 2 օսմանեան ոսկի, մի հատ գորգ և մի հատ լաւ ոչխար կաշառք։ Եւ դրանով մարդը ազատւում է։ Այժմ նա կառավարութեան է դիմել ու գանգատւել է...

Համիդիէներ արդէն հաւաքւում են և հետզհետէ պիտի ուղարկուեն սահմանները պահպանելու համար։

Հասանանցի Ֆատէհ աղան ձերբակալուած է ինչ որ հայերի հետ յարաբերութիւն ունենալուն համար։ Կառավարութիւնը հալածում է նոյնպէս համիդիէի գայմագամ Ալի պէյին, որը հէյտարանցի ցեղից է և ապրում է Արճէշի շրջանում. դա էլ որպէս թէ հայերին համակրում է. . .

Պայազէդի առաջնորդ, միանգամայն Իւչքիլիսէի վանահայր գեր. Էմանուէլ Ծ. վարդ. Պալեանը, որ գտնւում էր վանքում,—կառավարութիւնը խստիւ պահանջեց հեռացնել նրան վանքից. այժմ նա գտնւում է Պայազէդում։

Յապաղայում գաղթական պարսկահպատակ քիւրդերին միշիրը (7-րդ բանակի հրամանատար Զէքի փաշան) հրամայել է տեղաւորել երկրի ներսում. դրանք մօտ 800 տան չափ են, որոնք պարսկասահմանը աւրշտկելէ յետոյ, անցան այս կողմը և ո՞վ գիտէ, թէ գարունը ինչ քար ու քանդ գործի պիտի ձեռնարկեն։ Պատրաստւում են առհասարակ։ Ցաճիկ կառավարութիւնը դեռ ևս զէնք չի տւել. իրենց ունեցածից աւելին չունեն, բայց քիւրդը սովոր է, նա իր համար ուրէ զէնք է ձեռք բերում,—առանց դրան չէ կարող ապրել։

## ԼՈՒԻԶԵՐ ԵՐԿՈՒՆՔԻ ԱՇԽԱՐՀԻՑ

Մինչև Բասենի դէպքը թշնամին մտածում էր. „Ի՞նչ կարող են անել Ֆլահի կաչախները, այդ ստրուկ գեաւուրները. մի՞թէ նրանք էլ կը համարձակուին վեհափառ փաշիշահի զօրքի դէմ ելնել“։ Իսկ երբ կռիւը պայթեց, սարսափահար մահմէտականները միայն կանչում էին. հաւա՜ր հաւարի ետևից. իմա՜ռ, իմա՜ռ (օգնութի՜ւն, օգնութի՜ւն). . .

Բասենի դէպքից յետոյ զէնքի կանչեցին համիդիէները. ցիրուցան կանոնաւոր զօրքերը կենտրօնացան միջին կէտերում, համիդիէները ուղարկուեցին աւելի հեռուն, սահմանի մօտերքը։ Նրանք միայն շրջում են օր-ցորեկով 20-30 ձիաւորներով, անցորդներին բռնում, հարցաքննում են։ Նրանք հանգստանում են հայ գիւղերի մէջ։ Իւչքիլիսէի մօտիկ Ճուճան գիւղում մնում են այժմ 25 հոգի և ապրում են գիւղացիների հաշուով. տուն ու տեղ գիւղացին է տալիս. տալիս է և վառելիք, ուտեստ ևն։ Իւչ-քիլիսէի վանքի զօրքերի թիւը կրկնապատկուեց. առաջ 30 էր, այժմ 60 է։ Զօրքերը հսկում են ամենախիստ կերպով. գիւղացիներին դրսից, դաշտերից ներս են բերում արևը դեռ մայր չմտած. նրանց ենթարկում են խիստ հարցուփորձի՝ առանց հրամանի դրացի գիւղ կամ սահման անցնելու համար։ Զօրքը այնքան է կասկածով ապրում, որ ամէն մի փոքր խշշոց կարծել է տալիս նրան, թէ դա հոգեառ ֆէդայիներ են. անցեալները մի դէպք պատահեց ճիշտ Իւչ-քիլիսէի վանքում. մէկ գիշեր հերթապահ զօրքերը երևակայական հայդուկի ոտքի ձայնը լսելով, սկսել էին հրացան պարպել՝ փախա՜ւ, հա՜, փախա՜ւ ասելով—թէ ո՞վ փախաւ չգիտեմ. խեղճերը իրենց շուքից էլ վախենում են. . . Նոյնպիսի մի ծիծաղաշարժ դէպք պատահել է Կարինի շրջանում, Կարմիր վանքի մօտերքը։ Բասենի դէպքից յետոյ մի գիշեր այդ շրջանի պահականոցի մի զինուորի ձեռքից հրացան է պայթում ու տեղի է տալիս խիստ իրարանցումի. հակառակ կողմի պահականոցի զինուորները դուրս են թափւում և ֆէդայի՞ պօռալով հրացան են արձակում իրար վրայ, խառնւում են իրար և սպանում մէկմէկի. ծիծաղաշարժողբերգական մի տեսարան է ներկայանում, երբ լուսանում է. . . Սպանուողների թիւը 30-ից աւելի է. . .

## ԲԱՍԵՆԻ ԿՌԻԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

(ՆԱՄԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ)

Քիւրդ ու տաճիկ ամէնքն էլ այսօր զբաղուած են հայ յեղափոխականներով,—ի՞նչ են անում նրանք և ի՞նչ պիտի անեն. . . Օրաւուր սարսափը թանձրանում է ամէն տեղ, օրաւուր յեղափոխականների նոր կռիւների մասին են պատմում. Քիւրդը քուն չունի. տաճիկ կառավարութիւնը սուտ հեռագիրներով մխիթարում է նրան ու ինքն էլ գողալով օր է անցկացնում։ „Ինչ պիտի անենք, եթէ այդ քեաֆիրները մեր շրջանում էլ երևան գան

թող մեզնից հեռո՛ւ լինեն", ասում՝ են ահաբեկած թիւրք ու քիւրդ պաշտօնեաները։

Բասենի դէպքը զանազան տեսակ են պատմում. Նրա ազդեցութիւնը մեծ է ամէն տեղ թիւրքերի և քիւրդերի վրայ։ Ասում են որ Դալի-Բաբայի մօտ զոհւել են 36 յեղափոխականներ, իսկ Թշնամու կողմից կոտորուածներին հաշւում են 500-ի չափ։ Այնտեղ լռեց, բայց այժմ էլի զրոյց կայ, թէ ֆէդայիներ կռիւ են սկսել Մանազկերտի, Թորթումի և Ղերջանի շրջաններում։ Ուրիշ տեղեր էս, ասում են, լիքն են այդ հոգեառներով... Այս բոլոր զրոյցները, բերնէ բերան անցնելով՝ սարսափ են ձգել մահմէտականների վրայ, որոնք առանց այն էլ վերջին ժամանակներս խիստ ընկճուած են մակեդոնական անցքերով...

# ԿՈՉՆԱԿՆԵՐԸ

Ու ալ անոնք ասկէ յետոյ եղերամայրերու վաշտի մը հանգոյն,
Մեր այրիութեան քաղաքներէն, աւաններէն ու վանքերէն
Այգին ու վերջալոյսին հետ պիտի լա՜ն, պիտի լա՜ն, պիտի լա՜ն
Իրենց Բռնաբարումին կակաչէ ողբերը Աքսորին ու Մահին հորիզոններուն՝
Յուղարկաւորելով մեր Յատաղանքի ու Ընդվզումի նորանոր խուժանները
Դէպի կառափնատներն ու թիարանները ու դէպի դագաղները փառքի...

Ու ճշմարիտ կ'ըսեմ ձեզի։ Անոնք, որ թքնելով Բռնակալի ճակատին
Մտրակներով ու սուիններով ստորերկրեայ սպանդանոցները քշուեցան,
Ու Անոնք, որոնք իրենց Զայնին հետ կապարէ հզօր բազուկները բարձրացնելով՝
Բռնաւորի վայրագ ստրուկներէն հողերուն ու ժայռերուն գամուեցան.
Անոնք, երէկի մեր Ինքնասիրութեան ու այսօրի մեր Հպարտութեան քանդակագործները հսկայական
Անոնք վաղորդայնի մեր ազատութեան Ատրուշանին անբասիր քուրմերը պիտի դառնան
Բովանդակ Ապառնիներու համար։

Ու երանի՜ Անոնց, որոնք ըմբոստ Մտածումի անճառ եղբայրակցութեամբ
Աքսորավար ճամբաներու վրայ իրենց ներբաններու փոշին,
Կամ՝ Ընդհարումներու Հրապարակներուն ու Պողոտաներուն վրայ իրենց արիւնը
Անոնք Փոշիին ու Արիւնին պիտի խառնեն...

Կոչնակներո՜ւն, կոչնակներո՜ւն, կոչնակներո՜ւն
Ունկնդրենք, ո՜վ Ատելութեան ու Վրէժի անձնուրաց դրօշակակիրներ,
Ու Տրտմութեամբ գինովցած՝
Առաջնորդենք մեր Յաւի, Զայրոյթի ու Մղուցքի ամբոխները ցուրական
Դէպի Աշտարակներն ու Պատնէշները ու դէպի Պալատները Ոճրագործին,
Մեր իժացած Յուսահատութեան մէջ փոշիացնելու Կոպիտ Ուժին յիշատակները,
Ու մեր գարշապարներուն տակ Բռնաւորին Ուղեղը տրորելու...

Որպէս զի երեկոյ մը Խաղաղութեան ու Փառքի ծիածաններուն մէջէն
Մեր կոչնակները միահամուռ ու տիրականօրէն Տիեզերքին
Արդարութի՜ւնը, Արդարութի՜ւնը, Արդարութի՜ւնը փոթորկեն...

ՎՏԱՐԱՆԴԻ

## ԴՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Դեկտեմբերի 22-ին Երևանի շրջանական դատարանը քննեց Հայկական ցոյցերի և բողոքների այն մասը, որ տեղի էր ունեցել օգոստոսի 22-ին, երբ Հազարաւոր ամբոխը տանելով իր հետ եպիսկոպոս Սիւքիաս Պարզեանին Էջմիածին, դիմել էր կաթողիկոսին խնդիրքով, որ նա ժողովրդի գոյքերը չտայ վայրենի ռուս կառավարութեան ձեռքը։

Դատի էին ենթարկուած 27 հոգի, որոնց նկատել էին իբր ամենավտանգաւոր մարդկանց։

Նրաղց պաշտպանել են բացի հայ փաստաբաններից նաև ռուսներու վրացիք՝ Տեսլենկо, Ստալ, Զապարիձէ և Անդրօնիկով։ 27-ից միայն 12 հոգի են ճանաչուել մեղաւոր, որոնցից 3 հոգի անչափահաս (21 տարեկանից պակաս) լինելու պատճառով դատապարտուել են 4 ամսւայ բանտարկութեան.—

Ռուբէն Հիմեան
Համայեակ Մայիլեան
Ղազար Մանուկեան

Իսկ 9 հոգի 8 ամսւայ բանտարկութեան։

Կարապետ Բէկնազարեան
Վազարշակ Մահեսի-Յակոբեան
Համայեակ Գէորգեան Ստեփանեանց
Միքայէլ Յակոբեան Բաբասեանց
Հայրապետ Սահակեան

Գեղամ Թարվերդեան
Մկրտում Գիւլխանդանեան
Լևոն Դեմուրչիօղլեան
Յարութիւն Մահտեսի-Յարութիւնեան:

Նոյն դատարանի առաջ կանգնած էր մի յանցաւոր թիւրք. սա մի պարզ գող էր, որ կոտրել էր արկղը և տարել էր մէջը եղած փողը: Ուրիշի փողերը կողոպտող այս գողը դատապարտուեց մի քանի տարուայ տաժանակիր աշխատանքի Սիբիրում: Վերջին րոպէին, այդ յանցաւորը դիմեց դատարանին հետևեալ խօսքերով. „Դուք, ռուս կառավարութեան ներկայացուցիչներդ, որ այդքան խիստ էք պատժում ինձ՝ իմ կատարած գողութեան համար, հետաքրքիր էր, թէ ինչպէս պէտք է պատժէիք ռուս կառավարութեանը, որը այս օրերս, օրը ցերեկով կոտրեց Էջմիածնի գանձարանը և կողոպտեց հայերի փողը“...

Յանցաւոր, գռեհիկ թիւրքի այդպիսի վերջաբանին ոչ ոք չէր սպասում և ապտակուած կառավարութեան դատարանի ներկայացուցիչները խոր լռութեամբ տարան այդ վիրաւորանքը:

* * *

Հ. Ինքնապաշտպանութեան Կ. Կոմիտէն Ղարսի սպանութեան փորձի առիթով ուղղել է մի թռուցիկ նահանգապետներին, պրոկուրօրներին, ռուսաց թերթերին և ներքին գործոց նախարարին. այդտեղ ասուած է.

„Ղարսի պօլիցմէյստեր Խերխեուլիձէի հետ յունուարի 5-ին պատահած դէպքը մեզ ստիպում է Ձեր ուշադրութիւնը հրաւիրել այն ծայրայեղ լրբութեան վրայ, որին հասել է Ձեր ոստիկանութիւնը: Վերոյիշեալ դէպքի մասին Ղարսի ռուս օֆիցէրները այսպէս են պատմում.— մի տան կտուրի վրայ մի քանի երեխաներ խաղալիս են եղել ձիւնի գնդակներով. այդ տան մօտից անցնում է պօլիցմէյստեր Խերխեուլիձէ գօրգօվոյի հետ. ձիւնի գնդակներից մէկը դիպչում է պօլիցմէյստերի երեսին. վերջինը շւարած, իսկոյն դուրս է հանում ատրճանակը և առաջից անցնող մարդու վրայ պարպում է մի քանի անգամ, վիրաւորում է պատահական անմեղ անցորդին և անմեղ գօրգօվոյին ու ձերբակալում այդ ժամանակ փողոցում եղած բոլոր մարդկանց՝ մինչև 40 հոգի: Դուք՝ „կարգի ու կանոնի“ ներկայացուցիչներդ, քննեցէք, թէ Ձեր այդպիսի ստորադրեալները որքան են վնասում ընդհանուրի խաղաղութեան գործին և շուտով ենթարկեցէք նրան դատի, եթէ ոչ, ինքը ժողովուրդը ստիպած կը լինի իր ձեռքով կատարել իր դատաստանը“:

* * *

Մի ուրիշ թռուցիկ շօշափում է այն հարցը, թէ ի՞նչ պէտք է անել այն դէպքում, երբ ռուս կառավարութիւնը բոլորովին յեղաշրջէ հայ եկեղեցու իրաւունքները և հայոց կաթողիկոսը դառնայ բռնապետութեան մի սոսկ պաշտօնեայ.

„Այն ժողովրդի համար, որ 16 երկար ու ձիգ դարերի ընթացքում ճանաչել է և ճանաչում է միայն իր ներկայացուցիչների ձայներով ընտրուած կաթողիկոսներին, իսկ վերջինները ճանաչել են և ճանաչում են միայն այն հոգևորականներին, որոնց ընտրել է ամէն մի համայնք ձայների մեծամասնութեամբ՝ իր հոգևոր պէտքերը հոգալու համար, ինդիրը երկու լուծում չէ կարող ունենալ: Դա հայ համայնքի անհերքելի, անսասան իրաւունքներն են, դա հայ ժողովրդի դարևոր հաւատմունքներն են, ներքին պաշտամունքի աշխարհ է, հայ եկեղեցու ներքին կազմի խնդիր է, դա ընդհանրապէս հայ քրիստոնիայի խղճի հարց է և եթէ աշխարհիս բոլոր բռնապետներն անգամ հաւաքեն իրենց ոյժերը հայի դէմ, երբէք չեն կարող ստիպել հային՝ փոխել այն ամէնը, ինչ որ դարերի ընթացքում նրան թելադրել են խիղճն ու խելքը և դարձրել են այնպէս ամուր, ինչպէս մի ադամանդեայ բիւրեղ:

„Եւրոպայի կուլտուրական ժողովուրդների մշակած խելքն ու հմտութիւնը նոյն եզրակացութեան են եկել որին եկել է հայ ժողովուրդը — թէ ընտրողական սկզբունքը և ինքնավարութիւնը ամենայարմար և օգտաւէտ սկզբունքներն են, որոնց վրայ պէտք է հիմնուած լինի թէ հոգևոր և թէ աշխարհական կառավարութեան սիստեմը: Հետևապէս, ինչ որ էլ լինի, ինչ տեսակ կաթողիկոսներ, եպիսկոպոսներ և քահանաներ նշանակէ ռուս կառավարութիւնը և այդ նշանակուածները դաւաճանօրէն յանդգնութիւն ցոյց տան զանազան հրամաններ արձակելու հայ ժողովրդին,— հայ համայնքը, հայ ժողովուրդը, ռուս բռնապետութեան այդ նշանակած պնակալեզ հոգևորականների ոչ մի պատուէրը, ոչ մի կարգադրութիւնը, ոչ մի պահանջը, որքան էլ լաւ և օգտաւէտ լինեն նրանք, չպէտք է կատարէ: Եթէ մի քանի անգամ մի քանի տեղ ցոյց տուքս հաշակուած տոկունութիւնը, հայ ժողովուրդ, կառավարութիւնը ստիպուած կը լինի զիջել և նրա գծագրած յեղաշրջող օրէնքը կը մնայ լոկ թղթի վրայ. նորոգիր յիշողութեանդ մէջ այն հալածանքները և տանջանքները, որ դու կրել ես զանազան բարբարոսներից, յիշիր այն հալածանքները, որ ուրիշ ազգութիւններն են կրել և կրում են հաւատի համար, այն ժամանակ կը համոզուես, որ ոչ մի հալածանք չէ կարող ստիպել քեզ՝ համոզմունքներդ փոխելու“...

---

## „ՎՐԱՍՏԱՆ“-Ը ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

*(Շարունակութիւն № 10-ի եւ վերջ)*

Խօսելով ընդհանուր ճնշման դէմ փոքր ազգութիւնների բռնելիք դիրքի մասին, մենք չպէտք է մոռանանք նաև ազգերի փոխադարձ յարաբերութիւնների հարցը:

„Վրաստան“-ի ծրագիրը լինելով բաւարար Ռուսաստանի և Վրաստանի փոխադարձ յարաբերութիւնների տեսակէտից, պարունակում է սրբագրութեան կարօտ մի քանի թերութիւններ ներքին վարչական կազմի վերաբերմամբ:

Տէրութեան ուժը, գերիշխող մեծամասնութեան քանակը այնքան մեծ է Ռուսաստանում, որ ոչ մի փոքր ազգութիւն, ոչ մի շրջան համարեայ թէ անկարող է մեն մենակ դուրս գալ կռուի ասպարէզ, յաղթանակ տանելու յուսով: Անխուսափելի անհրաժեշտութիւն է դառնում՝ վերջ դնել փոքրիկ ազգութիւնների մէջ եղած տարաձայնութիւններին և մշակել մի այնպիսի քաղաքական ծրագիր, որը միջոց տար նրանց գործելու համերաշխօրէն, ձեռք-ձեռքի տուած ազգերի հաւասարութեան պաշտպան՝ ռուս տարրերի հետ:

Թողնում ենք „Վրաստան“-ի առաջարկի այն կողմը, որով առանց շօշափելու Կովկասի յարաբերութիւնը Ռուսաստանի հետ, նա երազում է ձեռք բերել ինքնավարութիւն միմիայն Կովկասի $^1/_4$ մասի, Վրաստանի համար: Իրենք վրացիք շատ լաւ գիտեն, կարծում ենք, դրա բոլոր դժուարութիւնները, եթէ չ'ասենք աւելին:

Բացի դրանից „Վրաստան“-ի ծրագիրը ներկայացնում է մի քանի շօշափելի թերութիւններ ևս:

Ապագայ վրաց Self government-ի սահմանները որոշելու համար „Վրաստան“-ի խմբագիրները հիմք են ընդունում նախ Հերակլ Բ. 1873-ին Եկատերինա Բ.-ի հետ կապած դաշնագրութիւնը և Վրաստանի մաս են համարում Հերակլի նախկին հարստութիւնը՝ արդի Թիֆլիսի նահանգը, Գանձակի նահանգի մի բաժնի հետ միասին:

„Միւս կողմից, ասում են նրանք, ինկատի պիտի առնել

վրաց ազգաբնակութեան բաժանումը Կովկասում և հետևաբար պիտի յիշատակել արևմտեան Վրաստանը (Քութայիսի նահանգը), որ խորամանկութեամբ, խաբէութեամբ և բռնի կերպով XIX դարի ընթացքում փոքր առ փոքր միացրած է Ռուսաստանին“։

Հետևելով երկու տարբեր սկզբունքների՝ „Վրաստան“-ի խմբագիրները թուլացնում են դրանցից ամէն մէկը կողմնակի կերպով հարուածելով՝ մէկով միւսին։ Արդարև. եթէ կանգնել „իրաւաբանական“ խախուտ տեսակէտի վրայ, որը „իրաւունք“ է տալիս վրացիներին ապագայ Վրաստանի կազմի մէջ մտցնել ոչ միայն վրացաբնակ Քարթլին ու Կախէթը, այլև հայաբնակ Սոմխէթիան, Ջաւախքը, հայ-թիւրքաբնակ Ղազախ-Շամշատինը — ապա ուրեմն նոյն տրամաբանութեամբ՝ Վրաստանից դուրս պէտք է թողնել Քութայիսի նահանգի զանազան շրջանները, որոնք Հերակլի օրերով և դրանից շատ առաջ, դարերի ընթացքում, ապրել են ինքնուրոյն, անկախ քաղաքական կեանքով։

Իսկ եթէ գերադասել աւելի բնական՝ ծագման ու լեզուաբանական հիմքերը, որով չի կարելի Վրաստանի մաս չհամարել Իմերէթը, Գուրիան, Մինգրէլեան իրենց վրաց ժողովրդի կէսին հաւասար ազգաբնակութեամբ — այն ժամանակ խօսք չի կարող լինել այն շրջանների մասին, ուր ազգաբնակութեան $^{9}/_{10}$ ունի այլ ծագում, այլ կրօն, խօսում է ոչ-վրաց լեզուով, ինչպիսին են Բօրչալի, Ախալքալաքի, Ղազախի գաւառները (պատմական Սոմխէթիան, Ջաւախէթը, Ղազախ-Շամշատինը)։

Հարցական նշանի տակ են մնում նոյնպէս Աջարիան, Սամցխէն, Սաինգլօն, ուր ծագումով վրացի մահմեդականները „վրացի“ խօսքը համարում են վիրաւորանք, իրենց նման „ուղղափառ միւսուլմանների“ պատուի համար։

Անկասկած, լեզուն ու ծագումը ազգութեան գլխաւոր յատկանիշներից են, սակայն նրանք բոլորը չէն, և մի ազգութիւն, մի քաղաքական մարմին կազմելու համար՝ անհրաժեշտ է ի նկատի առնել այդ մարմինը կազմող մասնիկների պատմական անցեալը, բարքառները, ձգտումները, սովորութիւնները, կրօնը, աշխարհագրական բաժանումները — ազգաբնակութեան ազատ կամքն ու ցանկութիւնը։

Ահա թէ ինչու դժուար է հաստատապէս ասել, որ դարերի ընթացքում քաղաքական ու ինքնուրոյն կեանք վարած և ուրիշ բարբառներով խօսող թուշերին, սվաններին, գուրիացիներին, մինգրէլացիներին ցանկալի կ'լինէր ունենալ կենտրօնական վարչութիւն քարթլի բարբառի և մէկ կաթողիկոսի գերիշխանութեան տակ, ինչպէս այդ առաջարկում են „Վրաստան“-ի խմբագիրները։

Հաշտութեան ծրագիր կազմելիս ի նկատի պէտք է ունենալ այս՝ ամէնը, որպէսզի տեղիք չլինի թիւրիմացութիւնների։ Եւ դժուար չէ այդ անել։ Բաւական է միայն Վրաստանի այլևայլ պատմական, աշխարհագրական շրջանների կազմակերպութեան վերաբերմամբ ընդունել նոյն „դաշնակցական“ (féderatif) սկզբունքը, որ „Վրաստանի“ խմբագիրները անհրաժեշտ են համարել իրենց Հայրենիքի և Ռուսաստանի փոխադարձ յարաբերութիւնների համար։

Ինքնավար Վրաստանը այդ պարագայում կը կազմէր այն մասերից, որոնք ճանաչում են իրենց վրացի և ցանկանում են կազմել մի քաղաքական մարմին։ Դաշնակցական կապը Վրաստանի այլևայլ շրջանների մէջ թոյլ կը տար նրանցից ամէն մէկին ունենալ իր շրջանական վարչութիւնը, պահպանել և զարգացնել իր բարքառը, սովորութիւնները, նոյնիսկ իր յատուկ տեղական օրէնսդրութիւնը։

Նախանձախնդիր իր երկրի, իր ծննդավայրի ինքնավարութեանն ու առաջադիմութեանը՝ ամէն մէկը կը յարգէր և հարևանի նոյնանման իրաւունքները։ Կովկասում կը վերանային վերջապէս անցեալի խառնաշփոթութիւնները, ամէն տեսակ քաղաքական գերիշխանութիւն՝ իր բոլոր բացասական կողմերով։ Դժբախտաբար „Վրաստան“-ի խմբագիրները իրենց միտքը չեն հասցնում մինչև շրջանական ազատութեան այս սահմանը. „Մենք — ասում են նրանք — տալիս ենք ամենամեծ նշանակութիւն վրաց լեզուի վերահաստատմանը։ Ազգային ժողովը կը յայտարարէ լեզուների հաւասարութիւնը, վրաց լեզուի պարտաւորեցուցիչ լինելը ինքնավար Վրաստանի շրջանում։ Ամենուրեք՝ ազգային ժողովում, գաւառական ժողովներում, քաղաքային վարչութիւններում, դատարաններում, վարչական հիմնարկութիւններում, եկեղեցիներում, դպրոցներում, բոլոր հիմնարկութիւններում վրաց լեզուն պիտի յայտարարուի պարտաւորեցուցիչ“... Խոստովանելով սակայն, որ իրենց նախագծած „Վրաստանում“ կան հայ և թիւրքաբնակ շրջաններ, վրաց թերթը շարունակում է. „Մենք չենք ուզում յայտարարել կռիւ մեր հարևաններին, մենք չենք վիճում նրանց իրաւունքի դէմ՝ ապրել այնտեղ, ուր նրանք ապրում են այսօր։ Մենք խնարհւում ենք փաստի առաջ և ընդունում ենք, որ պէտք է ստեղծել մի modus vivendi, որը միջոց տար բոլորիս ապրելու խաղաղ հարևանութեամբ“։ Այդ հիմնական պայմանը, նրանց ասելով, պիտի կայանայ նրա մէջ, որ ընդունելով ռուս և վրաց լեզուները պաշտօնական, ռուսաց լեզուն կենտրօնական համառուսական վարչութեան յարաբերութիւնների համար, վրաց լեզուն ներքին Վրաստանի յարաբերութիւնների համար ազգային և գաւառական ժողովներում թոյլ պիտի տրուի գործածել և այլ լեզուներ, որ կը թարգմանուին վրացերէնի։ Ինչ վերաբերում է խառը ազգաբնակութիւն ունեցող շրջաններին, „Վրաստան“-ի կարծիքով այդ տեսակ „գաւառը կամ քաղաքը բաժանուած պիտի լինին ազգային շրջանակների և ամէն մի շրջանի բոլոր հիմնարկութիւններում պիտի գործածուի այն լեզուն, որ խօսում է ազգաբնակութիւնը“։

Բնական և օգտակար կարելի է համարել շրջանական բաժանումներ երկու տարբեր ազգաբնակութիւն ունեցող հարևան գիւղերի, նոյնիսկ միևնոյն քաղաքի թաղերի մէջ, եթէ այլևայլ թաղերում բնակութիւն են հաստատած զանազան ազգեր, ինչպէս օրինակ Շուշի, Երևան։ Բայց ի՞նչ դրութիւն կը ստեղծուի վրացիների առաջարկած բաժանումով, օրինակ, ուէ Թիֆլիս կամ Բաթում, ուր այլևայլ ազգութիւնների անդամները ապրում են միմեանց կից, միևնոյն փողոցի վրայ։ $70^{0}/_{0}$ հայ ազգաբնակութիւն ունեցող Թիֆլիսի Հաւլաբար թաղը դպրոցների, դատարանների և այլ հիմնարկութիւնների միջոցով ճնշելու և հայացնելու է Հաւլաբարի մնացած $30^{0}/_{0}$ ռուս և վրացիներին, իսկ վրացախօս Մթածմինդայում նոյնը անելու են և վրացիները հայերի և ռուսների վերաբերմամբ։

Կասկածելի է որ „Վրաստան“-ի այդ առաջարկը աւելի գործնական և արդարացի լինէր Թիֆլիսի քաղաքային վարչութեան նախկին ձգտումից և նոյնիսկ

փորձէր ունենալ դպրոցներ, դասատուութիւն և այլ հիմնարկութիւններ հաւասարապէս երեք տարածուած լեզուներով։ Կասկածելի, է որ դրանից շատ աւելի նպատակայարմար չլինէր Յաճկաստանի քաղաքներում գոյութիւն ունեցող դրութիւնը, ուր տաճիկ, հայ, յոյն, հրէայ և այլ ազգութիւնների պատկանող տարրերը, ապրելով խառը միմեանց հետ, ունեն տարբեր ազգային-համայնական վարչութիւններ, որոնք հոգում են իրենց ազգային, կրօնական, կրթական, բարեգործական և նոյնիսկ սանիտարական ու դատաստանական պէտքերը, վերապահելով ընդհանուր խառը վարչութեանը՝ միայն մի քանի պաշտօններ։

Կովկասի, կամ մասնաւորապէս Վրաստանի նման երկրների համար, ուր ամենափոքր տարածութեան վրայ ապրում են տարբեր ծագումի, տարբեր լեզուի ու բարքաւռի, տարբեր սովորութիւնների, տարբեր պատմական անցեալի ու ձգտումների մարդկանց համախմբումներ, խոյս պիտի տալ ամէն տեսակ կենտրոնացումից, գերիշխանութեան ամենափոքրիկ նշոյլից անգամ։

Ամենալայն ապակենտրոնացում բոլոր ազգային, կրօնական, կենցաղավարական շրջանների համար, կատարեալ հաւասարութիւն կրօնի, լեզուի, սովորութիւնների գործածութեան նկատմամբ խառը շրջաններում ու համայնքներում և ազատութիւն ամէն տեսակ համախմբումների համար. ահա այն դրութիւնը—որը խօսելով „Վրաստան"ի բառերով—միայն կարող է հիմնուած համարուել արդարութեան սկզբունքի վրայ, որը միայն կըստեղծէ համերաշխութիւն և խաղաղութիւն մեր և մեր հարևանների մէջ, և որը միայն կը վերացնէ փոխադարձ ճնշման կարելիութիւնը։

Մենք հիմք ունինք կարծելու, որ ռուս գերիշխանութեան դէմ բողոքող ազատասէր վրացիները կը մերժեն գերիշխանութեան սկզբունքը առհասարակ և տալով իրենց ծրագրին իսկական դաշնակցական գոյն, կը դիմեն իրենց ազգային իրաւունքների պաշտպանութեան, կը դիմեն դրան ոչ թէ միայն բաւականանալով պրոպագանդով, այլև կազմակերպելով լուրջ մարմին, որը հետևողականօրէն ձգտէր վրաց ժողովրդի ինքնապաշտպանութեան ու վերածնութեան։

Հեշտ չէ հարկաւ, դրա իրագործումը — և կա՞յ արդեօք ոևէ լուրջ հասարակական խնդիր, որի լուծումը հեշտ լինէր։ Էականը նրանումն է՝ որ առաջ եկող հասարակական բարդ խնդիրներից ամենահեշտը և ամենանպատակայարմարը այն է, որը դարման հանդիսանալով բացուած վէրքերին, հիմնուած է արդարութեան, մարդկային հաւասարութեան պահանջների վրայ. իսկ այդպիսիների կարգին է պատկանում ամէն մի ազգի կատարեալ ինքնավարութեան հարցը։

Չպէտք է տատանուել. բռնակալութեան ու գերիշխանութեան վրայ հաստատուած դրութիւնները անվերջ չեն և վաղ թէ ուշ պիտի խոնարհուեն հաւասարութեան ու արդարութեան պահանջների առաջ։

Փոքր ազգերը, որքան էլ պակաս լինեն իրենց թւով, կը տանեն յաղթանակ, եթէ ոչ ուղղակի կերպով ու ֆիզիքապէս, գոնէ բարոյապէս՝ իրենց լեզուի, իրենց ազգային լաւագոյն առանձնայատկութիւնների, ազգային ստեղծագործութեան պաշտպանութեամբ ու զարգացմամբ։

Բացի այն սէրը, որ զգում ենք մենք, բոլոր ճնշածներս, դէպի մեր կեղեքուած մայր երկրի, դէպի մեր բռնաբարուած ժողովրդի իրաւունքները, մեր կողմն են արդարութեան և հաւասարութեան պաշտպան՝ օրէցօր զարգացող առաջադէմ կուսակցութիւնները, մեր կողմն են գիտութեան ու հասարակական կեանքի զարգացման օրէնքները։

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

### ԱՒԵՏԻՍ ՄԱՂԱՔԵԱՆ
(Ա.Վ.Օ)



1858- 1903

Ավօյի լիակատար կենսագրութիւնը ընելու համար պէտք պիտի ըլլար Դաշնակցութեան Պոլսի գործունէութիւնը պատմել առաջի օրերէն մինչև 1897 թուականը։ Զմտնելու համար այս մանրամասնութիւններու մէջ՝ պիտի բաւականանանք յիշելով միայն Ավօյի գործունէութեան գլխաւոր գծերը, և ցոյց տալով իր դերը այն աշխատութիւններուն մէջ, որոնք Պանք Օթօմանի ցոյցին յանգեցան։

Խարբերդի Հիւսէնիկ գիւղէն էր Ավօն, պատանեկութեան օրերէն Պոլիս անցած ու այնտեղ ալ հաստատուած։ Երբ Հ. Յ. Դաշնակցութիւնը դեռ նոր ոտք կոխած էր Պոլիս և դաշնակցական գործիչները դժուարութիւններու կը հանդիպէին իրենց ամէն մէկ քայլին, Եգիպտացին ծանօթանալով Ավօյի հետ և տեսնելով անոր մէջ բոլոր այն յատկութիւնները, որոնք պօլսական միջավայրի մէջ գործող յեղափոխականի համար անհրաժեշտութիւններ էին, մտերմական յարաբերութիւն հաստատեց անոր հետ և քիչ ժամանակէն Ավօն իր վարպետի ձեռքին տակ առաջնակարգ ուժ մը դարձաւ։

Ավօն իր ամբողջ ուժովը հրապարակ եկաւ այն ժամանակ, երբ Պոլսի Կեդրոնական Կոմիտէն ռումբեր պատրաստելու որոշումը տուաւ։ Այդ դժոխային գործիքներու պատրաստութիւնը Ավօյէն աւելի կարող ու ձեռնհաս ընկերի մը չէր կրնար յանձնուիլ, և Ավօն վստահ իր

ուժերուն վրայ, առանց վարանումի ստանձնեց այդ ահագին, պատասխանատու գործը։ Հուտով գտաւ իր ձեռքին տակ գտնուած խմբերու մէջ այն արհեստաւորները, որոնք պիտի կարողանային Կեդրօնական Կոմիտէի պահանջած ռումբերը ձուլել. գաղտնի աշխատանոց մը պատրաստեց անոնց համար, գնեց պէտք եղած բոլոր գործիքները և աշխատանոցի մէջ կեանքը սկսաւ, ռումբերը կը ձուլէին։ Ամբողջ քառասուն օր չի հեռացաւ Ավօն աշխատանոցէն, հսկեց տղայոց վրայ և իր ձեռք առած ամենախիստ միջոցներուն շնորհիւն էր, որ ոստիկանութիւնը երբէք չի կրցաւ հոտ մը առնել Պոլսի այդ յեղափոխական աշխատանոցէն։

Մէկ կողմէն ռումբերը կը պատրաստուէին և միւս կողմէն Ավօն զանոնք կը փոխադրէր ապահով տեղեր, սպասելով Կեդր. Կոմիտէի հրահանգին՝ ցրուելու համար Պոլսի զանազան վայրերը։ Հասաւ ժամանակը և Ավօն իր զուգին Արմենակի հետ մրջիւնի պէս փոխադրեց ռումբերը ու դրաւ զանոնք ենթակոմիտէներու տրամադրութեան տակ։ Պատրաստութիւնները երբ լրացան, Կեդրօնական Կոմիտէն որոշեց Պանքի ցոյցը, և Սկիւտարի հայաշատ թաղին պաշտպանութեան գործը յանձնուեցաւ Ավօյին, անոր տրամադրութեան տակ դրուելով 60 ռումբ և 55 ատրճանակ։ Ավօն անմիջապէս կը հաւաքէ իր ընկերները, խմբի անդամները, խորհրդակցութիւն կը կատարէ անոնց հետ ու թաղին ինքնապաշտպանութեան ծրագիրը կը մշակի. կը նշանակուին այն հինգ վայրերը, որոնք պիտի գրաւուէին դաշնակցականներու կողմէ՝ պաշտպանելու համար հայ ազգաբնակութիւնը յարձակումներէ։

Օգոստոս 14-ին, առաւօտ կանուխ, Ավօն կը բաժնուի իր ընտանիքէն, զաւակներէն ու կը մեկնի դէպի այն դիրքը, որ իրեն համար որոշուած էր մէկ քանի ընկերներու հետ։ Կ'անցնին մէկ քանի ժամեր, Պանքը կը գրաւուի, լուրը կը հասնի Սկիւտար. սարսափը կը տարածուի ամէն կողմ. բայց ինչ որ պատահած էր ուրիշ հայաշատ թաղերու՝ Խաս-գիւղի, Գասըմ-փաշայի, Ղալաթիոյ մէջ չի պատահիր Իւսկիւտարի մէջ. կոտորած տեղի չ'ունենար այդտեղ և Ավօն իր ընկերներու հետ երեք օր որոշուած դիրքի մէջ մնալէ ետքը, կը ցրուին՝ նախապէս ապահով տեղեր պահելով իրենց յանձնուած զէնքերը։

Գործին յաջորդող ոստիկանական խստութիւններու, խուզարկութիւններու ու ձերբակալութիւններու միջոցին Ավօյի դերը կը հասկցուի ոստիկանութեան կողմէ. խստիւ կը հսկուին փնտրել զինքը. ընկերները իմանալով՝ խորհուրդ կուտան իրեն որ անմիջապէս հեռանայ Պոլսէն, բայց ինքը կը մերժէ, որովհետև կատարելիք կարևոր գործերու առջև իր անձնական ապահովութեան հարցը չէր կրնար հետաքրքրել զինքը. ցրուած զէնքերը պէտք էր հաւաքէին ու ինքը իրրև ապահովութիւն կը բաւականանայ միայն թաղէն հեռանալով։ Ամբողջ քսան օր Սկիւտարը տակն ու վրայ կ'ընէ ոստիկանութիւնը ու վերջապէս կ'իմանայ իր բնակարանը, որ Գատը-գիւղ կը գտնուէր. յանկարծ 2 քօֆսէր, 5 ոստիկան ու 25 զինուոր կը պաշարեն տունը։ Ավօն զէնքով կ'ուզէ դիմադրել, բայց տնեցիներու խնդրանքին ու անոնց անձի ապահովութեանը համար, վերջապէս անձնատուր կ'ըլլայ։ Կրսկսի ծեծը, տանջանքը. ոստիկանութեան տնօրէնը՝ Հիւսնի պէյ՝ ինքը անձամբ կը հարցաքննէ Ավօն. յանցանքը շատ մեծ էր, մանաւանդ որ իրմէ առաջ ձերբակալուածները իր վրայ նետած էին ամէն պատասխանատուութիւն. ամբողջ 35 օր զնդանը կը մնայ, բայց ոչ մէկ տանջանքի, ոչ մէկ զրկանքի տակ կամքի ուժը չի խորտակիր, ոչինչ չի խոստովանիր, բայց և այնպէս Արտակարգ ատեանը, որ կազմուած էր յատկապէս Պանքի ցոյցի առթիւ ձերբակալուածներու համար, կը դատապարտէ զինքը տասնհինգ տարուան բերդարգելութեան, ու իր կինը, որ միասին ձերբակալուած էր, եօթը տարուան։ Կ'անցնին մէկ քանի օրեր ու Ավօն ալ միւս բանտարկեալներու հետ՝ օգտուելով սուլթանի հրամայած ընդհանուր ներումէն՝ կ'ազատի բանտէն։

Բանտէն ելլելուն՝ Ավօն նորէն կը գտնէ իր ընկերները, որովհետև ոչինչ էր կորսնցուցած իր հաւատքէն ու եռանդէն ու կը սկսի գործունէութեան. հիներէն շատերը սպաննուած, ուրիշներ արտասահման անցած էին, պէտք էր նոր ուժ պատրաստել և ան ալ այնպիսի ժամանակ մը, երբ ոստիկանութիւնը՝ ծանօթ շատ մը գաղտնիքներու՝ սոսկալի խստութիւններ կը գործադրէր. պաշարումի դրութիւն մը ստեղծուած էր, և յեղափոխականները իրենց ամէն մէկ քայլին ահագին դժուարութիւններու կը բաղխէին։ Կեդր. Կոմիտէն հակառակ Ավօյի բաղձանքին, չի համարձակիր վտանգաւոր գործեր յանձնել անոր, քանի որ անգամ մը կասկածուած՝ ոստիկանութիւնը միշտ հսկողութիւն պիտի ընէր իր վրան։

97-ի ցոյցին նախապատրաստական աշխատութիւններուն մէջ ալ ունեցաւ Ավօն իր կարևոր բաժինը և երբ որոշուած օրը մօտեցաւ, Կեդր. Կոմիտէի հրահանգովը Ավօն ձգեց Պոլիսը, քանի որ իր ձերբակալութիւնը անխուսափելի կ'երևար բոլորին համար։ Անցաւ Եգիպտոս և այդ երկրին մէջ ընտանեկան մեծ դժբախտութիւններ իրար ետևէ ամենադառն տանջանքներու ենթարկեցին զինքը. երեք զաւակներու մահէն դառնացած՝ ձգեց փարաւոններու երկիրը ու բռնեց Ամերիկայի ճամբան, ուր հասաւ յոգնած, ջարդուած դրութեան մէջ։ Ութը ամսուան կեանքը, զոր հոն անցուց Ավօն, շատ ծանր էր իրեն համար. չի կրցաւ դիմանալ բարոյական ու նիւթական տանջանքներուն և դարձաւ թոքախտաւոր մը։ Ընկերները այդ վիճակէն ազդուած՝ զինքը նորէն զրկեցին Եգիպտոս, այն յուսով թերևս, որ այդ երկրի կլիման զինքը պիտի փրկէր. բայց արդէն բոլորովին սպառած էր խեղճը, օրհասը մօտեցած էր։ Ավօն երկու ամսուան կեանք ունեցաւ Ալէքսանդրիա ու իր աչքերը փակեց հիւանդանոցի խցիկին մէջ, հեռու իր հայրենիքէն, իր ընտանիքէն, չի հասած իր մուրազին։

Ալէքսանդրիոյ հայկական գերեզմանատան մէջ, Եգիպտացիի շիրիմին քովերը, գերեզմանաքար մը՝ նուիրուած հայրենիքի անձնուէր զինուորի յիշատակին՝ ցոյց կուտայ այն տեղը, ուր Ավօն իր վերջին քունը կը քնանայ։ Իր յիշատակը պիտի մնայ սակայն իր ընկերներու սրտին մէջ և իր անունը՝ մտատիպարը պիտի ըլլայ անխոնջ, հաւատացող ու անձնազոհ գործիչի։

## ՄՈՌՅԻԱԾ ԸՆԿԵՐ ՄԸ

## „ԱԶՐԱՅԷԼ"—ՍԻՄՈՆ

Հինգ ամբողջ տարի է անցեր, ինչ Դատուան գիւղի մէջ զէնք ի ձեռին ինկաւ քաջը։

Զգիտեմ ճիշդ ինչ պատճառներով, բայց հաւանօրէն աղէտներու շուտափոյթ իրար յաջորդումին համար և

գիտակից ընկերներու միառմի մարտիրոսանալովը, մոռացութեան մէկ անկիւնը մնաց Սիմոն, ոչ ոք չգրեց, չծանօթացուց Ազբայէլին, այն ահ ու սարսափին, որմէ կը դողար Բաղէշը։

Քիչ ու կարճ ծանօթացայ իր հետ. սակայն խղճի պարտք կը համարիմ գէթ այդ քիչը գրել։

Նա ծնած էր, չգիտեմ ճիշտ որ թուականին—անգիր մարդու տղայ էր — Մօտկան գաւառի Քաշախ գիւղին մէջ։ Դեռ շատ փոքր հասակին, նա իր հօր Ղուկասի հետ կը գաղթէ Բաղէշ, ուր հայրը ընտանիքի ապրուստը հոգալու համար ջաղացպանութեան կը ձեռնարկէ. իսկ Սիմոնը թաղին տղոց հետ կը յաճախէ թաղին դպրոցը։

Աղքատութիւնը չթոյլատրեց Ղուկասին՝ որդուն երկար պահել դպրոցին մէջ. հազիւ կրցած էր պարզ կարդալ սորվիլ՝ „դարբինի աշակերտ“ ըրաւ զայն։

Կէծ ու կրակ Սիմոնին համար շատ լաւ էր դարբնի արհեստը։ Նրա մոտկանցիի լեռնական արիւնը դարբնի փուռին առջև ալ աւելի եփ կուգար։

Բաղէշը ծանօթ է իր բնակիչների կծծիութեամբը, դրամն է որ կը թագաւորէ հոն։ Դրամի կծծիներու մէջէն շատ դժուար է ազգային զգացումի դուրս պոռթկումը, մանաւանդ որ ան նիւթական զոհողութիւն ալ պիտի պահանջէր բաղէշցի հայէն, որ իրենց բացատրութեամբ „հոգին դեհ մրն է, տաս փարան դէհ մը։„

Ահա այսպիսի միջավայրի մէջ էր որ դուրս կուգար յեղափոխական Սիմոնը։ Դեռ 90 թուականէն, երբ հայկական շարժումը իր մանուկ վիճակի մէջ էր, երիտասարդ Սիմոնը պարզ սուրհանդակի դեր կը կատարէր։ Նա այս ու այն պատուակի ներքև կը թողուր դարբնի փուքսը ու նամակներ առած կը վազէր դէպի Բաղէշ։ Պէտք էր ըսել, իր վարպետը գիւղերը խանութ բացած էր։ Նա սուրհանդակ էր և պրոպականդիստ։ Նրա մեղմ խօսակցութիւնը համոզիչ էր և դիւթիչ։ Իր ճշդապատում լեզուն և լուրջ եզրակացութիւնները՝ յեղափոխական շարժման մասին՝ անոր քայլերու, անոր ապագայ յաղթանակին մեծ յոյս կը ներշնչէին. այն աստիճան որ, անտարբեր Բաղէշն անգամ շարժուիլ սկսեց։

Սուրհանդակի պաշտօնը շատ հնչեղ էր Սիմոնի կուռող բնաւորութեան համար։ Մէկ կողմէն իր վարպետի հետ ունեցած ընդհարումները, միւս կողմէն յեղափոխութիւնը զինուած, գործնական վիճակի մէջ տեսնելու բաղձանքը, ինչպէս նաև հեռաւոր ընկերներու հետ ծանօթանալու տենչը, զինք քաշեցին տարան կովկաս։

Շատ ատեն չ՚անցաւ ու օր մը բաղէշցին լսեց թէ, Սերոբ-Աղբիւրի հետ Սիմոնը վերադարձած էր զէնք ի ձեռին։ „Հայրենիքի տանջող սէրը“ զինք ձգած էր դէպի „Ցառապանքի աշխարհը“։ Կռիւ կ՚ուզէր ան և զէնք ի ձեռին նետուեցաւ կռուի դաշտը։

Ու այդ օրէն անբաժան ընկերն էր անմահ Սերոբին, ինքն ալ անմահ մը։ Կարճ ժամանակի մը մէջ այնպէս կազմակերպեց Բաղէշը, կէս մը վախի, կէս մը համոզումի տակ, որ ամենագործօն վայրերէն մէկը դարձաւ։

Բաղէշի գազան քիւրդ-թիւրքերու ահ ու սարսափը կարծես բնաւ նշանակութիւն չունէր անոր համար։ Ազատ համարձակ ելումուտ կը գործէր Բաղէշը։ Յեղափոխութեան անմատչելի վայրը Սիմոնի օրով „ջուրի ճամբայ“ դարձաւ։

Կտրիճ էր Սիմոն, անվախ, յանդուգն, բառիս լայն իմաստովը։ Նա չգիտէր ինչ է վախը։ Իր անուս վիճակին մէջ, կառավարող ուժ էր ան։ Կը սիրուէր բոլորէն, կը պաշտուէր։ Մրայն Բաղէշի ունևոր դասակարգն էր, որ իր դրամը Ազբայէլէն աւելի կը պաշտէր, ու իր այդ նիւթապաշտութեանը ուզեց զոհել ազատութեան պատգամախօսին։

Հարուստները, դրամի այդ տղուկները, կը մատծէն դաւադրել. կը կանչեն Սիմոնը, կը խոստանան դրամ հանգանակել մէջերնին և ժողովուրդը զենելը Սիմոնի սրտին ամենամօտ մի միտք։ Ու Սիմոնը բերկրութեամբ կ՚ուզէ հասկնալ թէ ինչ կը պահանջէին իրմէ։

„Զէնք, կը պատասխանեն կեղծաւորները, պէտք է Պարսկաստան գնաս և մեզի զէնք բերես. մենք հեռագրով դրամը կը հասցնենք“։

Աղբիւրի խորհրդակցութեամբը նա կը մեկնի դէպի Պարսկաստան, բայց փոխանակ դրամի, անվերջ գանգատներ, բողոքող նամակներ կը հասնէին Սիմոնի ետևէն, որոնք նոյնիսկ կը թելադրէին վերջացնել այդ „աւերիչ գործն“։ Սակայն Սիմոնը կը յաջողի համոզել ընկերները, որ քննիչ մը ուղարկեն ու Գուրգէնի հետ կը վերադառնայ երկիր։ Թշնամիները կը պապանձին. Սիմոն աւելի եռանդով կը գործէ։ Նա կը դառնայ Գուրգէնի և Աղբիւրի աջ թիկունքը։ Իսկ բաղէշցիներու համար հոգեառ հրեշտակ-ազբայէլ։

Հայու պահապան հրեշտակը, յեղափոխութեան մարմնացումը, իսկ վատերու հոգեառը, ոչ մի արգելքի չի հանդիպեցաւ իր ամբողջ գործունէութեան մէջ, ոչ մի խոչընդոտ չէր արգիլեր զինք գործելէ։ Ընկերական որոշում մը—ու ամեն բան վերջացած էր. նա կը թռչէր, թէկուզ կրակի կամ՝ ջուրի մէջէն անցնէր իր ճամբան։ Քաջը քաջութեամբ ալ մեռաւ, բայց ափսոս որ մատնութեամբ մը։

1898 թուականին, Վարդավառի կիրակին, Ազբայէլը, Աշոտ, Նափօն և Բարսեղ կ՚իջնէին Դատեան գիւղ։ Վատ օրեր էին։ Հէրքեզ Ալի բէկը ամբողջ Ախլաթի գիւղերը քարուքանդ ըրած էր։ Խուզարկութիւն կար, քաջերը կը փնտռէին. իսկ խաղաղ ժողովուրդը կը տանջէին։

Ալի բէկ իր անգթութիւնները ծայր աստիճանին հասցուցած էր։ Բողոքները խճողուած էին կառավարութեան դուռը։ Խօսք կար թէ Ալի բէկը պիտի աքսորուի, արդէն կանչուած էր Բաղէշ։ Իր յանցանքն էր, թէ խստութեամբ վարուած էր խաղաղ ժողովրդի հետ, սակայն կարող եղած չէր „խառնակիչներու“ հետքն անգամ գտնել։ Վերջին փորձ մըն էր որ կ՚ընէր Ալին, գէթ ինքզինքը փրկելու։ Ու բախտը ժպտեցաւ Ալիին։ Նոյն Վարդավառի կիրակին Ալի կ՚իջնէ Դատեան։ Աշոտի կինը իր հագուստ կապուստովը կասկած կը յարուցանէ Ալիի մէջ, թէ Աշոտը գիւղի մէջն է։ Մի քիչ շարչարանք կնոջ—և նա յանձն կ՚առնէ քաջերու բոյնը ցոյց տալ։

„Աշո՛տ, դուրս արի, զէս ազատէ“, կը կանչէ մի կանացի ձայն, մարագի դռան առջև։ Դրնկ, դրնկ կ՚որոտան երկու հրացաններ՝ մին կնոջ համար, միւսն անոր հետ եղող զապթիայի։ Զապթիան կ՚իյնայ, իսկ կինը կ՚ազատի։

Քիչ ետք կռիւը կ՚սկսի արևամտին։

Աշոտ չ՚ուզեր դուրս գալ։ „Կը կռուիմ մեռնելու աստիճան, թող չ՚ապրիմ, որ ըսեն կինդ մատնիչ է“։ Ու իրօք Աշոտը կ՚իյնայ։ Դիշերայն Նադօն և Բարսեղը կը ծակեն մարագի պատը, բայց իզուր կ՚աղաչեն Սիմոնին մեկնիլ իրենց հետ։ „Վատութիւն պիտի ըլլայ ընկերոջ դիակը հոս թողուլ, առանց վրէժի։ Մէկտեղ ապրեցանք,

մկսեղ ալ պէտք է մեռնինք", կը պատասխանէ Ազրայէլը ընկերներուն։ Այդ որոշումին վրայ ալ հաստատ կը մնայ։ Նադօն ու Բարսեղը կը մեկնին. Բարսեղը Ճանապարհին կ'իյնայ։ Նադօն անոր ալ զէնքը կը վերցնէ կ'անցնի։ Իսկ Ազրայէլը քաջաբար միայնակ կը կռուի մինչև արևածագին, երբ մարագը կը վառեն վրան ու չգիտցուիր՝ գնդակով թէ հեղձամահ կ'իյնայ քաջը։

Կ'ապրի՞ իր յիշատակը։

Փա՞ռք իր յիշատակին։

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

„Շատ դժուար է, գրեթէ անհնարին է ռէֆօրմներ մտցնել Թիւրքիայի մէջ խաղաղ ճանապարհով... Ի՞նչ կարող է բերել ապագան — „Չ՚ոք չը գիտէ"։

Այս տխուր ու նշանակալից յայտարարութիւնն է անում Վիեննայի „Fremdenblatt"ը, կոմս Գօլուխօվսկու օրգանը։

Օր աւուր կարծէք, հաստատւում է, որ ծայրագոյն Արևելքի անցքերը պիտի ունենան ուժեղ հակահարած մերձաւոր Արևելքում. հնարաւոր է թւում, որ մակեդոնական խնդիրը, Տաճկաստանն ալեկոծող բոլոր խնդիրները հանդէս գան շուտով աւելի կնճռոտուած և աւելի հրամայական կերպարանքով, — և այդ այն պատճառով, որ Տաճկական Արևելքի վրայ վաղուց ի վեր ծանրացած՝ բռնապետական Իրաւարարը, Ռուսաստանը, ներկայումս արդէն ոտից գլուխ խրուած մի արհաւիրալից պատերազմի մէջ՝ հազիւ թէ կարողանայ գործօն դեր խաղալ կ. Պոլսում։

Անգլիան, ցարիզմի դարաւոր ախոյեանը, թւում է թէ այլ ևս հակուած է վերստանձնել իր վաղեմի, կորցրած դերը, Բոսֆորի ափերում։ Նա սաստիկ զբաղուած է Տիբետում և Բալկաններում... Նա, ինչպէս հաստատում են, յորդոր է կարդում ռուսաց խնամակալութիւնից ազատուած Աւստրիային՝ կորովի կերպով միջամտել մակեդոնական խնդրում, մի բան, որ անհրաժեշտաբար կը քաշէ իրար ետևից Իտալիային, Ֆրանսիային և Անգլիային... Արևելեան հարցը կը մտնէ այդպիսով մի բոլորովին նոր շրջանի մէջ։

Մինչ այս մինչ այն՝ ալբանացիները ահա արդէն հրապարակ եկան տասնեակ հազարներով, և տեղի են ունենում արիւնահեղ ճակատամարտեր նրանց և Թիւրքերի մէջ։ Մի նոր փոթորիկ Բալկանների վրայ։ Ինչո՞ւ են շարժւում ալբանացիները.—արդեօք նրա՞ համար, որ իրենց իրաւունքները, սովորութիւնները բռնաբարուած են գտնում Մակեդոնիայի համար սահմանուած ռէֆորմների ծրագրով, թէ՞ գուցէ հէնց հպատակւում են Եբլդիզ-քիոսկից եկած մի նենգաւոր հրահանգի...

Ցամենայն դէպս այդ վայրենի և արիւնարբու ցեղերը իրենց մշտնջենական սպառնալիքներով ու շարժումներով սկզբից իվեր մեծ դեր են խաղացել մակեդոնական ճգնաժամի զարգացման մէջ։ Ինչ էլ լինի ալբանական խռովութիւնների պատճառը, եթէ նրանք ընդարձակուին և ուժեղանան, կարող են մի նոր բարդութիւն առաջացնել, քանի որ ալբանական հարցը ունի որոշ չափով և միջազգային նշանակութիւն.—նա շահագրգռում է մասնաւորապէս Իտալիային, որը միշտ սիրով հիւրընկալում է ալբանացի յեղափոխականներին և մտադիր է մի օր գրաւել նրանց երկիրը։

Ալբանների ապստամբութիւնը մի պատրուակ կը լինի Թիւրքիայի համար՝ նոր-նոր զօրքեր բերել Ասիայից և կենտրոնացնել Թշւառ, քարուքանդ Մակեդոնիայի մէջ, որ առանց այն էլ հեծում է սուլթանական զօրքերի շահատակութիւններից...

Մակեդոնիան հեռու է խաղաղուելուց և իրազեկ մարդիկ հաւոզուած են, որ նա պիտի խաղաղի միմիայն արիւնահեղ մի պատերազմի գնով։ Դրութիւնը մերձաւոր Արևելքում օրէցօր սպառնալից այժմեութիւն է ստանում, և չնայած պաշտօնական հանդիսաւոր ծանուցումներին, չնայած Ռուսաստանի գործ դրած ճնշման՝ թէ Սոֆիայի և թէ կ. Պոլսի մէջ այն զգացումն է իշխում, որ ընդհարումը անխուսափելի է Տաճկաստանի և Բուլգարիայի միջև։ Ուստի և երկու կողմից պատրաստութիւններ են տեսնւում։ Ստոյգ աղբիւրներից տեղեկացնում են, որ Թիւրք պատերազմասէր շրջանները խոր հաճոյք զգացին, առնելով ռուս-եապօնական ընդհարումի լուրը և մանաւանդ լսելով Ռուսիայի պարտութիւնները...

Հարց է ծագում՝ արդեօք ռուս-աւստրիական հռչակաւոր համաձայնութիւնը պիտի կարողանա՞յ այժմեան պայմաններում ազդու կերպով ձեռք առնել Բալկանների խաղաղացման գործը և այդպիսով առաջն առնել նոր հրդեհների... Թւում է թէ ոչ։ Եւ այն ժամանակ հրամայական անհրաժեշտութիւն է դառնում Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների հաւաքական միջամտութիւնը։

Սակայն „անհրաժեշտութիւնը" և „հնարաւորութիւնը" դեռ դժբախտաբար հեռու են իրարից, և մենք ըստիպուած ենք կրկնել „Fremdenblatt"-ի խօսքը. „Ի՞նչ կարող է բերել ապագան — ոչ ոք չը գիտէ"...

# ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * *

Ռուս-եապօնական պատերազմը, ինչպէս և սպասելի էր, յուզեց շովինիստների կրքերը Ֆրանսիայում։ Յետադէմ և օպպօրտիւնիստ-հանրապետական մամուլը, որին գլուխ է կանգնած համաշխարհային Temps լրագիրը, իր սովորական քծնող հաճոյականութեամբ, խոնարհ հպատակին յատուկ եռանդով՝ մաղթանքներ է ուղղում սպիտակ ցարին և յիրաւի կամ յանիրաւի պաշտպանում է Ռուսաստանին Եապօնիայի դէմ։ Մեր խօսքը „Տան" թերթի քաղաքական առաջնորդողների մասին չէ—որոնք, ինչպէս այդ նկատած կ'լինի ուշադիր ընթերցողը—յաճախ կազմում են մի տարօրինակ անհերդաշնակութիւն թերթի ամբողջութեան հետ, որովհետև խմբագրւում են Ֆրանսիս դը Պրէսանսէի ձեռքով։

„Ալլիանս"-ի կոյր սիրահարներին ամէն բան ներելի է. յանուն այդ „Ալլիանս"-ի (Ֆրանկո-ռուս դաշնակցութեան), մի տեսակ պաշտամունք են դարձրել ոչ միայն ռուսութիւնը, այլև ռուսական բռնապետութիւնը, ցարիզմը իր գարշելի, մարդասպան ռէժիմով։

Նոյն ծառայական վերաբերմունքը մենք դիտեցինք ռուսահայոց եկեղեցական գոյքերի յափշտակման միջոցին. Պարիզի անսկզբունք, ծախու մամուլը միացած ռուսական „Նովոյէ-վրէմիա“-ի պէս աղտոտ թերթերի հետ, արդարացնում էր ցարի կառավարութեան աւազակային գործը և մեղադրանքներ էր ուղղում հայ ժողովրդին, „հայ խռովարարներին“...

Այսօր նոյն այդ մամուլը խունկ է ծխում Ռօմանովների գահի առաջ՝ պատերազմի առթիւ... Նողկալի երևոյթ, որ անկարելի է արդարացնել ոչէ բանաւոր շահի նկատումով։

Բարեբախտաբար կայ անկախ մամուլ։ Նրա ազդեցութիւնը կերակշռող չէ շովինիզմի բռնկման այս օրերում, չնայելով որ նրա ներկայացուցիչները պարլամենտի մէջ կազմում են ճնշող մեծամասնութիւն։ Բայց նրա ձայնը դարձեալ ազդու է, զօրաւոր։ Կան հեղինակաւոր հրապարակախօսներ, որոնք նոյնիսկ այժմեան պայմանների մէջ պայքարում են սանձարձակ ռուսամոլութեան դէմ և առանց քաշուելու մերկացնում են „մեծ դաշնակցի“ ներքին խոցերը, բռնապետական ռէժիմի բոլոր գարշանքը։ Հէնց այդ ներքին թուլութիւններին են վերագրում նրանք Ռուսաստանի ձախորդութիւնները պատերազմի սկզբում և նրա ապագայ հնարաւոր պարտութիւնը։

Այդպիսի հեղինակաւոր քննադատներից է Ժորժ Կլեմանսօ, Սենատի անդամ, *Aurore* թերթի խմբագրապետը։ Պատերազմի սկզբնաւորութիւնից իվեր նա անողոք գրչով մտրակում է Ռուսաստանի պետական կազմը, նրանից բղխող անհամար չարիքները։ Նա իբրև պարտաճանաչ ֆրանսիական քաղաքացի և կողմնակից ռուսական դաշնակցութեան՝ ուզում է, որ Ֆրանսիայի դաշնակիցը իրօք ուժեղ լինի, և այդ ուժը տեսնում է միայն Ռուսաստանի ներքին յեղաշրջման մէջ։ Այդ անկեղծ ընթացքը դուր չեկաւ նացիոնալիստներին և օպպօրտունիստ „Տան“-ին։ Իր ոլիմպիական բարձրութիւնից այդ վերջինը քարկոծեց Կլեմանսօին, յայտարարեց նրան հայրենիքի թշնամի, փորձեց ամէն կերպ վարկաբեկ անել նրան։ Պէտք է ասել, որ „Տան“-ի խմբագիրը նոյն ընթացքն է բռնել վաղուց իվեր նաև Ժորէսի նկատմամբ։

Եւ առաջ եկաւ մի կծու բանակռիւ։ Կլեմանսօն չխնայեց իր հակառակորդին։ Նա օգտուեց առիթից և իրեն յատուկ անկեղծութեամբ բաց արեց „Տան“-ի խմբագրապետ՝ զգրելի Էբրարի անցեալ ու ներկայ բոլոր կեղտերը։ Ահա թէ ինչ է գրում նա *Aurore*-ի երկու առաջնորդողների մէջ.

„Ես չեմ փակել աչքերս այն քաոսների վայրագութիւնների առաջ, որոնք մտնում են ռուս կառավարութեան ծրագրի մէջ։ Հէնց այդ է, որ չէ կարող ընդունել Ադրիան Էբրար։ Այդ մարդը, որ ազատամիտ է Կախիչ Մուրավիովի ձևով, հայերի դէմ անարգաբար արշաւելուց յետոյ՝ այժմ դառնում է արժանաւոր ջատագով բռնապետական ռէժիմի, որը արտաքսում է իր խորհուրդներից երկրի ամէն մի ներկայացուցչութիւն, աքսորում է քաղաքացիներին առանց դատի, յափշտակում է նրանց գոյքերը և այլն։

...„Մոռացե՞լ է արդեօք պ. Էբրար այն անամօթ անարգանքները, որ նա ուղղում էր հայերի դատը պաշտպանողներին,— այն հայերի, որոնք, թեով երեք հազար — կին, ծեր ու երեխայ — այրել էին Ուրֆայի եկեղեցում Աբդիւլ Համիդի հրամանով, որին Գլադստոն անուանել էր սուլթան-մարդասպան։ Իշխան Լօբանով այդտեղ տեսնում էր մի սոսկ „պատահար“.—պ. Էբրար ձայնակցում էր նրան։ Եւ ապա մի քանի ժամանակից յետոյ, երբ քամին փչեց ուրիշ ուղղութեամբ, նոյն պարոն Էբրար կոկորդիլոսի արցունքներ թափեց նոյն Հայաստանի վրայ և ցինիկաբար ցաւ յայտնեց, որ չէին հետևել այն քաղաքականութեան, որ ինքը դատապարտել էր այնքան կատաղօրէն։ Որքա՞ն կ'ուզէի մի բացատրութիւն ըստանալ պ. Էբրարից այդ կէտի վերաբերմամբ... Սակայն հէնց այդ կէտին հասանք — նա ընդհատեց խօսակցութիւնը... Կարծում եմ, դրա համար ունի իր պատճառները“...

Հրաշալի խօսքեր են սրանք և թունաւոր խօսքեր, որ մեծանուն հրապարակախօսը զզւանքով նետում է այն տխուր անձնաւորութեան երեսին, որը հայ ժողովրդի արեան ու սարսափի օրերում սուլթանի շնորհներն էր վայելում, փոխարէնը հատուցանելով և միաժամանակ իր հայրենիքի մէջ ցոյց տալով ինքզինքը, որպէս հանրապետական սկզբունքների պաշտպան, արդարութեան ու ազատութեան ջատագով... Էբրար յիրաւի պատճառներ ունի լռելու։ Նա ինքն էր սկսել բանակռիւը և բնաւ չէր սպասում հակառակորդի կողմից այնքան մոլեգին յարձակումների, և մանաւանդ այնքան սարսափելի ակնարկների... Նա կրեց իր պատիժը, խայտառակուեց բոլոր ազնիւ քաղաքացիների առաջ։ Ուրիշները ևս կը պատժուին, յուսանք։ Ցուսանք, որ Կլեմանսօների անողորմ խարազանը պիտի մաքրէ վերջապէս մամուլի սուրբ տաճարը կեղտի ու ապականութեան ներկայացուցիչներից, գաղափարազուրկ, ծախու հոգիներից։

* * *

Էլիզէ Ռէկլիւ, տիեզերական Աշխարհագրութեան հռչակաւոր հեղինակը՝ Պարիզի La Revue-ի՝ մէջ հրատարակած „Համասլավոնականութիւն և Ռուսական միութիւն“ վերնագրով մի յօդուածի մէջ հետևեալն է գրում, ի միջի այլոց, Անդրկովկասի և հայերի մասին.

...„Ինչ վերաբերում է հրաշալի Անդրկովկասին, որը գուցէ աշխարհիս ամենագեղանի երկիրն է, նա, որ կլասիկ առասպելների մէջ հռչակուած է որպէս երջանկութեան վայր, և ուր մարդկութիւնը երկար ժամանակ իր որրանը փնտրեց,—այդ հարուստ երկիրը ևս հաւասարապէս զգում է իր վրայ ռուսական տիրապետութեան ծանրութիւնը...

...„Հայերը, որ կազմում են Թիֆլիզի ազգաբնակութեան մեծամասնութիւնը և ունեն իրենց սրբազան մայրաքաղաքը, Էջմիածինը, ռուսական հողի վրայ,—հայերը լաւ գիտեն, թէ ինչեր են կրել իրենց իշխողներից։ Ի՞նչ ասել վերջապէս, 250 միլիոն ֆրանքի յափշտակման մասին, որ ամբարուած էր դարերի ընթացքում և ազգի կողմից դրուած եկեղեցու դանձարանի մէջ։ Այդ դարշելի կեղեքման յիշատակը երբէք չը պիտի ջնջուի, քանի որ ներկայ ռէժիմի տակ այդպիսի կեղեքումների ցանկը անդադար պիտի աւելանայ։ Հայկական հարցը գուցէ ամենափոքրիկ կէտն է այն վնասների ամբողջութեան մէջ, որոնք սպառնում են կայսրութեան մեծ մարմնին։ Հայերը՝ իմացական և քաղաքակրթութեան ծարաւ՝ պիտի հանդիսանան մի ահաւոր կազմալուծող տարր Ռուսաստանի ոստիկան-զինուորական ահագին օրգանիզմի մէջ“։

* * *

„Européen“-ի նշանաւոր աշխատակիցներից մինը՝ Ֆրեդերիկսէն զետեղել է այդ թերթի № 116-ում մի կարևոր յօդուած՝ „Դեղին վտանգը և Ռուսաստանը“ վերնագրով։ Այդտեղ խօսելով ցարիզմի աշխարհակալութեան վտանգների մասին, նա ասում է իմիջի այլոց.

„Ինչպէ՞ս արդեօք հաշտեցնել Ռուսաստանի դիրքը դէպի հայերը՝ քաղաքակրթութեան և յառաջդիմութեան մասին մեր ունեցած ընդհանուր գաղափարների հետ։ Մենք չենք խօսում միայն հայոց եկեղեցական գոյքերի այժմեական խնդրի մասին, այն գոյքերի, որոնց վրայ ռուս կառավարութիւնը դրել է իր ձեռքը, որովհետև հայ եկեղեցին բաւականաչափ ռուսասէր չէ։ Հայաստանը այն հողն է, ուր բոլորն էլ լաւ աչքով կը դիտէին Ռուսաստանի ազդեցութեան տարածումը,

գուցէ նոյնիսկ մինչև Ալեքսանդրեստի ծոցը, եթէ նա (Ռուսաստանը) կամենար ազատել այնքան հետաքրքրական այդ ազգութիւնը, որը անհրաժեշտաբար պիտի դառնայ Փոքր-Ասիայի քաղաքակրթութեան խարիսխը:

Դրա փոխարէն՝ Ռուսաստանը թիւրքերի ձեռքը տուեց հայերին, դիտելով նրանց որպէս „ապստամբներ“: Ինչպէս կարելի է հաւատ ունենալ մի այդպիսի կառավարութեան քաղաքակրթող զօրութեան վրայ, որը չէ ուզում յարգել ոչ մի մանաւոր զարգացում՝:

## ՏԵՌՕՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Սալնոյ-Զորի Կեդր. Կոմիտէի վճռով՝ յուլիս 23-ին տէռօրի է ենթարկուած Կարմունջ գիւղի ռէս Սհակ, իր կատարած մատնութիւնների պատճառով:

ՍԱԼ. ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԷ

—.—

Սասունի Պատ. Կեդր. Կոմիտէի վճռով՝ հոկտեմբեր 28-ին տէռօրի ենթարկուեցաւ Մշոյ դաշտի Հաւրան գիւղի ռէս Գրիգոր, որ յայտնի էր տարիներէ ի վեր իր կատարած մատնութիւններով և թիւրք կառավարութեանը մատուցած ծառայութիւններով:

ՍՀԱԿԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԿՕՄԻՏԷ

—.—

Խ...-ի տեղական մարմնի վճռով և Սասունի պատասխանատու մարմնի համաձայնութեամբ՝ սեպտեմբեր 25-ին տէռօրի ենթարկուեցաւ Նախկին յեղափոխական Աւագը, որ կոտորածներէն յետոյ կազմակերպական զէնքեր յանձնած էր քիւրդ աղային ու ինքն ալ անոր մօտ ծառայութեան մտած էր:

Խ...-Ի ԿՕՄԻՏԷ

## ՆԻՒՐԱՏԻՈՒԹԻՒՆ

### ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

Մոսկ. քաղաքի Եկեղ. խմբից՝ 1590 ֆրանք: Պետեր. ուսանողներից 70 ռուբլի (199 ֆր.): Թ. քաղաքի մի խումբ գիմնազիստներից՝ Ռ., Ա., Գ. 12 ռուբլի (32 ֆր.): Ստ. Բալեկչեանից (Փօքշան) 11 ֆր.: Աս. Վարդանեանից (Սուլինա) 70 ֆր.: Մանդակունի (Պարիզ) 3 ֆր.:

Գահիրէի Կոմիտէից՝ Ոսկանապատի Կ. Կ-ի վիճակահանութեան 50 տոմսերի փոխարժէքը 648 ֆր. 10 սանտիմ:

Թէհրանի Կ.-ից գրքերի հաշիւ 100 ֆրանք:

Սուլինայի „Դանուբ“ Ենթակոմիտէից 1130 ֆր. 20 ս.:

Շվէյց. Գրանսօն ք-ից Տէր-Բաբեան 10 ֆրանք:

Ընդհանուր գումար 3793 ֆրանք 30 սանտիմ:

### Հ. Ց. ԴԱԾՆԱԿ. II. (ՋՐԱԲ.-Ի) Կ. Կոմիտէն՝

1903 թ. յունուարի 1-ից օգոստոսի 1-ը.

| № | | |
|---|---|---|
| 1030 | Բլուր գ. 6 անծնաւորութիւններից | տ. 100 ռուբլի, |
| 1031 | Ջ-գի մի խումբ գինուորներից | 2 ռուբլի 84 կոպէկ, |
| 1032 | Բլուր գ. երեկոյթից արդիւնք | 117 ռ., |
| 1033 | Թարթառ գ. 5 ամսավճար | 16. 65 ռ., |
| 1034 | Ջրաբերդի Նորատին խմբ. միջ. հարսանիքում | 5. 30 ռ., |
| 1035 | „ „ „ | եօթն անուան տօնի առթ. 46 ռ., |
| 1036 | „ Լաւակ „ | յունուարի ամսակ. 3 ռ., |
| 1037 | „ Մնճան „ | 5 ռ., |
| 1038 | „ Խորհուրդ „ | միջ. Աւետ. տօն. առթ. 42. 80 ռ., |
| 1039 | „ Արմենիս „ | Զրօրդն. տօնի առթ. 40. 50 ռ., |
| 1040 | „ Գութան „ „ „ „ | 41. 50 ռ., |
| 1041 | „ Անիսոնի միջոց. „ „ „ | 36 ռ., |
| 1042 | „ Ախլցխացոց տան I.՝ երեկոյթից | 35 ռ., |
| 1043 | „ Անիսոնի տան երեկոյթից | 55 ռ., |
| 1044 | Ամառանոցում 5 հոգուց | տ. 39. 50 ռ., |
| 1045 | Առուակ գիւղի հասարակութիւնից | 41. 85 ռ., |
| 1046 | Նորարփին „ Երկաթ խմբից | 19. 50 ռ., |
| 1047 | „ „ հասարակութիւնից | 66 ռ., |
| 1048 | Արեգ „ „ | 11. 30 ռ., |
| 1049 | „ Պ. Էօքզ. գիւղից նուէր | 2. 50 ռ., |
| 1050 | Ծաղկաձոր գիւղի հասարակութիւնից | 57. 40 ռ., |
| 1051 | Նորարփին գ. 4 հոգ. | տ. 26. 50 ռ., |
| 1052 | Առուակ գ. | տ. 20 ռ., |
| 1053 | Ճամբորդ գ. հասարակութիւնից | 78. 38 ռ., |
| 1054 | „ գ. 4 հոգուց | տ. 80 ռ., |
| 1055 | Փայլուն գ. երիտասարդներից | 38. 50 ռ., կանանցից 7. 71 ռ., գումար 46. 21 ռ., |
| 1056 | Ա. Դ.-ից մի ծի եւ | տ. 20 ռ., |
| 1057 | Տ. Ձ. եւ Տ. Պ. | տ. 10 ռ., |
| 1058 | Ձկաձորի կանանց խմբից | 4 ռ., |
| 1059 | Նորարփին գ. Տ. Ա. Մ. | 5 ռ., |
| 1060 | Քարաձոր գ. հասարակութիւնից | 6. 50 ռ., |
| 1061 | „ գ. քաղաքացիներ. | 15. 50 ռ., |
| 1062 | Պրազ գ. հասարակութիւն. | 40 ռ., |
| 1063 | Ջրաբերդի Փայլակ խմբ. | 3. 90 ռ., |
| 1064 | „ Գ. Բ.-ից նուէր | 25 ռ., |
| 1065 | Կիլիկիայ գ. հասարակութիւն. | 22 ռ., |
| 1066 | Օրթ. Քլ. գ. հասարակութիւն. | 2 ռ., |
| 1067 | Ջրաբերդի № խմբ. | 8 ռ., |
| 1068 | Օձաձոր գ. երեկոյթից | 81 ռ., |
| 1069 | Որմիզդ գ. երեկոյթից | 100. 48 ռ., |
| 1070 | Ամառանոց գ. հարսանիք. | 11. 35 ռ., |
| 1071 | Հիւսիս գ. ծնունդի եւ նշանդրէքի առթիւ | 7 ռ., |
| 1072 | Ընդարձակ գ. հարսանիքի առթիւ | 8. 2 ռ., |
| 1073 | „ գ. հասարակութ. | 12 ռ., |
| 1074 | „ գ. Բարեսիրտ խմբ. | 5 ռ., |
| 1075 | „ գ. Մ. Մ. նշանդրէքի առթիւ | 4. 68 ռ., |
| 1076 | Ակն-քաղաք գ. հասարակութ. | 25. 31 ռ., |
| 1077 | Անառիկ գ. հասարակութ. | 39. 20 ռ., |
| 1078 | Ս. Մ.-ի տօնի առթիւ Ջրաբերդում | 6. 85 ռ., |
| 1079 | Ջրաբերդի Վրէժ խմբ. միջ. Սարգսի տօնի առթիւ | 26 ռ., |
| 1080 | „ տօնի եւ հարսանիքի առթիւ | 6. 50 ռ., |
| 1081 | „ տօնի եւ հարսանիքի առթիւ | 6. 50 ռ., |
| 1082 | Քարձոր գիւղում հանգանակ. Սամնոյ համար | 44. 85 ռ., |
| 1083 | Պ. Մ. դստեր հալրմնտեսի առթիւ | 12. 50 ռ., |
| 1084 | Արփաշէն գ. հասարակութ. | 5. 10 ռ., |
| 1085 | Ս. Քսպ. տօնի առթիւ | 3 ռ., |
| 1086 | Անառիկ գ. հասարակութ. Սամնոյ համար | 17. 65 ռ., |
| 1087 | Խորհուրդ խ. երեկոյթից եւ տուգանք Տ-եանից | 90 ռ., |
| 1088 | Լոիկ գ. ներկայացումից | 177 ռ., |
| 1089 | Հիւսիս գ. ներկայացումից | 46. 20 ռ., |
| 1090 | Պ. Աբրահամի հարս. առթիւ | 3. 87 ռ., |
| 1091 | Ծառաստան գ. հասար. Նժդէհի միջոցով | 24. 95 ռ., |
| 1092 | Նորաձին խմբ. միջ. հարսանիքներից | 10 ռ., |
| 1093 | Ձղդաձորցի Բղդ. հարսանիքից | 5 ռ., |
| 1094 | Բ.-ի որդու մկրտ. առթիւ Ջրաբերդ | 4. 75 ռ., |
| 1095 | Աբգ. քրոջ հարս. „ „ | 3 ռ., |
| 1096 | Կ-ի աղջկայ „ „ „ | 6 ռ., |
| 1097 | Քշմ. „ „ „ „ | 11 ռ., |
| 1098 | Պ. Պողոսեանի „ „ „ „ | 2. 15 ռ., |
| 1099 | Վ. Դրգ. „ „ „ | 15. 48 ռ., |
| 1100 | Գ. Ձ. „ „ „ | 7. 90 ռ., |
| 1101 | Ջրաբերդում Վ. Լ. տօնի առթիւ | 5. 1 ռ., |
| 1102 | „ Վ. Պ. տօնի առթիւ | 5 ռ., |
| 1103 | „ Վ.-ի տօնի առթիւ | 6 ռ., |
| 1104 | „ Վ. Ս.-ի տօնի առթիւ | 8. 85 ռ., |
| 1105 | „ Գ. Ձ.-ի տօնի առթիւ | 12 ռ., |
| 1106 | „ Վ. Տ.-ի տօնի առթիւ | 11 ռ., |
| 1107 | „ Մի խումբ մարդկանցից | 7. 95 ռ., |
| 1108 | „ խմբ. | 9. 50 ռ., |
| 1109 | „ Ց. Տ. որդոց փեսատեսին | 8 ռ., |
| 1110 | „ Ջ. Դ. տօնի առթիւ | 13. 50 ռ., |
| 1111 | „ Ա. Մ. եւ Գ. Տ. նշանդր. առթիւ | 4 ռ., |
| 1112 | „ Ա. Ք.-ի հրաւէրում հանգանակ. | 28. 70 ռ., |
| 1113 | Եփրատ գղ. հասարակութիւնից | 15 ռ., |
| 1114 | Ջրաբերդում մի ոմնից նուէր | 5 ռ., |
| 1115 | „ Գութան խմբից | 32. 25 ռ., |
| 1116 | „ Շարժական խմբ. | 3. 15 ռ., |
| 1117 | „ Լուսինեան խմբ. | 5. 70 ռ., |
| 1118 | „ Լուսաբեր խմբ. | 5. 80 ռ., |
| 1119 | „ Քաջասիրտ խմբ. | 4. 75 ռ., |
| 1120 | „ Նորաբեր խմբ. | 4. 80 ռ., |
| 1121 | „ Կ. Խ.-ի տօնի առթիւ | 5 ռ., |

1122 Ջրաբերդի Ցոյս խմբ. երեկոյթից 47. 65 ռ.,
1123 „ Երազգաւոր գղ. ներկայաց. 40 ռ.,
1124 Գեղէօն խմբ. Ջրաբերդում 8 ռ.,
1125 Շերամ գղ. ներկայացումից 145 ռ.,
1126 Կշիռ խմբից Ջրաբերդ 14. 50 ռ.,
1127 Մի քանի հոգուց տ. Վռամշապուհի միջոց. 7 ռ.,
1128 Փուշ գղ. հասարակութիւնից 36. 20 ռ.,
1129 Ճերմակ-ձոր գղ. հասարակութ. 24. 5 ռ.,
1130 Քար-ձոր գղ. հասարակութիւնից 22 ռ.,
1131 Խորհուրդ խմբ. հոկտ-նոյ. ամս. Ջրաբերդ. 11. 50 ռ.,
1132 Խորհուրդ խմբ. վիճակախաղից „ 23. 70 ռ.,
1133 Աբշալոյս խմբ. նոյեմ. եւ դեկտ. „ 7. 40 ռ.,
1134 Շարժական խմբ. „ 2. 90 ռ.,
1135 Նոր երգ պատանի խմբ. „ 4 ռ.,
1136 Քար-ձոր գղ. ներկայացումից „ 61. 75 ռ.,
1137 Ջրաբերդի Սեւ-սար խմբից մարտ ամս. 4. 20 ռ.,
1138 Կղզի գղ. երեկոյթից 55 ռ.,
1139 Ջրաբերդի Արօր խմբից 7 ռ.,
1140 Ջրաբերդի Խորհուրդ խմբի երեկոյթից 40. 47 ռ.,
1141 Նախաձործ գղ. Արծիւ խմբ. 21 ռ.,
1142 „ գղ. Զոհ խմբ. 3. 20 ռ.,
1143 „ Նոր հաւատ խմբ. 2. 90 ռ.,
1144 „ մի քանի անձնաւորութիւններից 3 ռ.,
1145 Ջրաբերդի Ժիրայր խմբ. 3 ռ.,
1146 Որմիզդ գղ. տ. 20 ռ.,
1147 Որմիզդ գղ. Ն. Մ. եւ Պ. Տ. 30 ռ.,
1148 Որմիզդ գղ. Ա.-ից եւ մի ոմնից 10. 50 ռ.,
1149 Որմիզդ գղ. հասարակութիւնից 30 ռ.,
1150 Ջրաբերդի Մոծակ խմբ. 3. 30 ռ.,
1152 Օձածորի գղ. հասարակութ. 108. 30 ռ.,
1153 Ա. Դ.-ից ստացած ծիու վաճառումից 60 ռ.,
1154 Բ.-ցի Մ.-ից տ. 40 ռ.,
1155 Պրակ գղ. ներկայացումից 43 ռ.,
1156 Վտակ գղ. ներկայացումից 61. 75 ռ.,
1157 Մ. Պ.-ի տօնի առթիւ Ջրաբերդ. 12 ռ.,
1158 Տ. Թ. Մ.-ից նւէր մի ոսկի 2 ռ.,
1159 Մ. Գ.-ից կնոջ յիշատակին 5 ռ.,
1160 Ն. Բ-ից մօր յիշատակին 10 ռ.,
1161 Նորեկ գղ. հասարակութիւնից 57. 40 ռ.,
1162 Բլուր գղ. հասարակութիւնից 113 ռ.,
1163 Արեգ գղ. հասարակութիւնից 53 ռ.,
1164 Ջրաբերդի հաւատ խմբ. 20 ռ.,
1165 Ջրաբերդի Լուսինեան խմբ. 2. 50 ռ.,
1166 Անխախտ զին. խմբ. 13 ռ.,
1167 Թնդանօթ զին. խմբ. 5. 85 ռ.,
1168 Քաղաքավասում հանգանակւած 16. 35 ռ.,
1169 Ջրաբերդի II. Ցոյս խմբ. 2. 50 ռ.,
1170 Անապատում հանգանակւած 450 ռ.,
1171 Անապատում հանգանակւած 56. 85 ռ.,
1172 Հանքում հանգանակւած 460 ռ.,
1173 „ Ծմակ գղ. հասարակութիւնից 4 ռ.,
1174 „ Մեղր գղ. հասարակութիւնից 11. 40 ռ.,
1175 „ Անառիկ գղ. հասարակութիւնից 34. 25 ռ.,
1176 „ Բարձրավանդակի հասարակութ. 76. 20 ռ.,
— „ Գետափ գղ. կորցրւած ծայրերի հմր. 394. 40 ռ.,
— „ Ոստանիկ գղ. հասարակութիւնից 54. 80 ռ.,
— „ Լեռնավայր գղ. հասարակութիւն. 25. 20 ռ.,
1177 Ջրաբերդի Շահապիվան խմբ. 45 ռ.,
1178 Ծառաստան գղ. Զին. խմբ. 15 ռ.,
1179 Ծառաստան գղ. տ. 7 ռ.,
1180 Փայլուն գղ. տ. 10 ռ.,
1181 Ձկածորի գղ. 5 հոգուց տ. 10 ռ.,
1182 Վարդածոր գղ. հասարակութիւնից 33. 30 ռ.,
1183 Ջրաբերդի Փայլուն խմբ. 3. 70 ռ.,
1184 Ջրաբերդի գետակ խմբ. 11. 5 ռ.,
1185 Ջրաբերդի Արեւ խմբ. 3. 37 ռ.,
1186 Ջրաբերդի Գութան խմբ. երեկոյթից 172. 22 ռ.,
1187 Ջրաբերդի Գութան խմբի II. երեկոյթից 60. 88 ռ.,
1188 Եփրատ գղ. գղ. մի քանիսից տ. 10 ռ.,
1189 Եփրատ գղ. հասարակութիւնից 48. 45 ռ.,
1190 Ջրաբերդի Փայլակ I. խմբ. 4. 60 ռ.,
1191 Ջրաբերդի Փայլակ II. խմբ. 5. 10 ռ.,
1192 Ջրաբերդի Մոծակ խմբ. 3. 30 ռ.,
1193 Ջրաբերդի Փայլուն խմբ. 4. 35 ռ.,
1194 Ջրաբերդի Շարժական II. խմբ. 11 ռ.,
1195 Կղզի գղ. հասարակութիւնից 69. 32 ռ.,
1196 Արամ գղ. ներկայացումից 45. 50 ռ.,
1197 Արամ գղ. հասարակութիւնից 41. 45 ռ.,
1198 Կղզի գղ. հասարակութիւնից 146. 78 ռ.,
1199 Ձկածոր գղ. հասարակութիւնից 129. 40 ռ.,
1200 Ձկածոր գղ. ներկայացումից 34 ռ.,
1201 Գասպ. Սր-ից տ. 200 ռ.,
1202 Փայլուն գղ. հասարակութիւնից 17. 50 ռ.,
1203 Նորարփին գղ. Երկաթ խմբից 44. 35 ռ.,
1204 Ջրաբերդի Աբաս խմբ. 7. 90 ռ.,
1205 Ջրաբերդի Վրէժ խմբ. 25 ռ.,
1206 Ջրաբերդի Վազգէն խմբ. 2. 85 ռ.,
1207 Ստուեր գղ. հասարակութիւնից 30 ռ.,
1208 Նախընթաց գղ. հասարակութիւնից 75 ռ.,
1209 Ջրաբերդի Լուսին խմբ. 2. 10 ռ.,
1210 Առուակ գղ. ներկայացումից 64 ռուբլի 40 կոպէկ:

(Կը շարունակւի)

## ԺԼԱՑ ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԷՆ՝

Ս. Ք.-ի ձեռքով 500 ռուբլի, Նորածնից հին տարիների հաշւին 70, Նորածնից 1903 թ. հաշւին 210, Գ-սկից 1903 թ. հաշւին 66, Ն-կից ճ.-ի ձեռքով 120, Կենդրոնում ժողովւած է 708. 35, Աւետիսից ժողովւած է 250 ռ.: Գումար 1924 ռ. 35 կոպէկ:

## ԿԱՐՄԻՐ ՋՐԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷՆ՝

Անդամավճարներ՝ Անդրանիկ I. խմբ. (օգոստոս) 10. 50 ռուբլի, Անդրանիկ II. խմբ. (օգոստոս) 10, Կոկոն խմբ. (սեպտ.) 6. 48, Զեփիւր խմբ. (սեպտ.) 7, Թաթուլ խմբ. (սեպտ.) 13, Անդրանիկ I. խմբ. (սեպտ. եւ հոկտ.) 14. 65, Անդրանիկ II. խմբ. (սեպտ. եւ հոկտ.) 20. 50, Կոկոն խմբ. (հոկտ.) 7. 80, Զեփիւր խմբ. (հոկտ.) 6, Արուսեակ խմբ. (հոկտ.) 13. 50 ռ.: Նւէրներ՝ Պ. Ա. Վ. 55 ռուբլի, Արամից 3, Ուխտածորից 4. 50, Աղբիւր Կուլակից 1. 50, Երկու մասնաւոր երեկոյթներում հանգանակւած 22. 25, Զեփիւր խմբի կայացրած մի հաշտութիւնից 10, Ն. Մարգեանի յիշատակին հանգանակած 36. 40, Անդրանիկ I. խմբի վիճակախաղից 20, Գոհարիկ եւ Արուսեակ կանանց խմբերի կազմակերպած տօնածառից 94. 20, Արուսեակ խմբ. հաւաքած 20, Միւս խմբակների միջոցով հանգանակւած 87. 70, Արուսեակ խմբի հանգանակած՝ հետեւեալ անձերից՝ Մարաս 9, Տիգրապատ, Արմենակ, Ստեփաննոս, Մասիս, Քասբար 3-ական, Սարիբէգ 6, № Վարթազար 5, Մէջ, Գանձավանք, Գողթան, Սարսափ, Շուշի 2-ական, Զարշարող, Արամ, Սողոմոն, Աղուան, Սարգիս, Նուշրէւան, Մելքում, № թունի 1-ական, Գտիչից 1: Գումար 517 ռ. 98 կոպէկ:

## ԻՐԱՆ-ԹՈՒՐԱՆԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷՆ՝

Գործակատար խմբի միջոցով յունւար 16-ին կազմակերպած ա. երեկոյթում՝ Ձկնորսից 15 ռուբլի, Ներսէհ Կամսարական, Շաւարշ Մամիկոնեանց, Քար-Թակող եւ Ղարաքէշիշ 10-ական, Ուստան 11. 50, Պահակ Սահմանեանց, Ռշտունի, Պալունի, Սօլօ, Ղարագեօզ, Կարօն եւ Բարի-սահաթի 5-ական, Աշոտ, Փայտ տաշող, Ալմուրաղ 2-ական, Մկրատ, Դուին 1-ական, Կորիծ 50 կոպէկ, Ժողովարարութեան № 145 թերթով Ղարաքէշիշ եւ Ուստան 10-ական ռուբլի, Բարի-ժամու, Մ. Գրիգորեանց, Մ. Ստեփանեանց, Ա. Բաքայեանց, Ա. Մելիք-Ազարեանց, Սնդրէ Հայրեանց, Ցարութիւն Աւետիսեանց 5-ական, Պահակ Սահմանեանց, Կարօ, Մարտիրոս Բաղդասարեանց 3-ական, Պալունի, Ռշտունի, Հայկակ, Թաթուլ, Վարդօ, Ս. Պետրոսեանց 2-ական, Ոմն 2. 50, Աշոտ, Քաջ, Վասպուրական, Արէգ, Ա. Գրիգորեանց, Ա. Խաչիկեանց, Կայծակ 1-ական, Արշակ 50 կոպէկ, Անդամավճարներ առ 1-ն յունւարի 1904 78. 50 ռ.: Գումար 274 ռ. 50 կոպէկ:

## ՌՈՒՍԱՆԻԱ՝

ԴԱՆՈՒԲ ԵԵՆԹԱԿՕՄԻՏԷՆ ստացեր է 1903 թ. յուլիս, օգոստոս եւ սեպտեմբեր ամիսներուն.—

Ս.-էն՝ Հագուլ խմբ. 36 ֆրանք, Վարագ խմբ. 15, Կարին խմբ. 15, Սերոբ-Աղբիւր խմբ. 28, Նոր-Դար խմբ. 30, Զինասէր խմբ. 26, Սեպուհ խմբ. 20. 50, Փէղայի խմբ. 15. 30, Տարօն խմբ. 11, Տրդատ խմբ. ապրիլ 1-էն մինչեւ հոկտեմբեր 1-ին 38. 50, Պրահլայէն՝ Նիհար խմբ. յունիս յուլիս եւ օգոստոս ամիսներուն 27, Նիհար խմբ. սեպտ., հոկտ. եւ նոյեմբ. ամիսներուն 24, Ս.-էն՝ Ա. Մանուկեանէ նւէր 5, Սիմէօն ծերէ նւէր 5, Աս. Կարապետեանէ նւէր 2, Նախորդ մնացած գումարն է 710. 10 ֆր.: Գումար 1008 ֆրանք 40 սանտիմ:

## ԾՈՎԱՓԻ ԿՕՄԻՏԷՆ՝

ՏԱՊԱՐ քաղաքէն՝ Թոշնակ 40 ղրշ., Մարդասէր 20, Շիրակացի 12. 20, Բարեսիրտ 100, Երկու տղայք 40, Սազօ 30, Ամօ 30 ղրշ.: Գումար 272 ղրշ. 20 փարա:

---

Մեր խմբագրութեան հասցէն՝

Rédaction du „Droschak“, Genève (Suisse)

Հ. Յ.
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

18 | 5 Յունուարի 1904, Ժընէվ

# ՈՉ-ՌՈՒՍԱՀՊԱՏԱԿ ՀԱՅԵՐՈՒՆ

Յարգելի հայրենակիցներ,

Յայտնի է Ձեզ, որ Ռուսիոյ Նախարարական խորհուրդը իր յունիս 12-ի նիստին մէջ որոշած է յարքունիս գրաւել հայ եկեղեցապատկան կալուածները, որոնք ըստ նոր տնօրինութեան՝ պիտի կառավարուին այսուհետև պետական կալուածներու նախարարութեան կողմէ։ Իսկ կալուածներէն ստացուած հասոյթները պիտի յատկացուին ծխական և ուրիշ կարգի դպրոցներու պէտքերուն և այդ ծախքերէն մնացած գումարները միայն պիտի յանձնուին համապատասխան եկեղեցիներուն ու վանքերուն։

Յունիս 12-ի կարգադրութիւնը, խլելով հայ կղերի ձեռքէն եկեղեցապատկան կալուածներու վարչութիւնը, ոչ միայն կը խախտէ Հայաստանեայց եկեղեցւոյ իրաւունքները ազգային գոյքերու կառավարութեան խնդրոյն նկատմամբ, այլև կը հանդիսանայ իբրև նորատեսակ յափշտակութեան ձև մը 100 միլիոն ռուբլի արժէքաւոր հայ ազգային ստացուածքներու։ Դժուար է ուրիշ կերպ անուանել ռուս նախարարներու որոշումը, քանի որ „հայ ծխական“ անուանուած դպրոցները, որոնց գոյութեան պահպանման համար պէտք է ծախսուի կալուածական հասոյթներու մեծագոյն մասը, չունին գրեթէ ոչինչ „հայ“ ազգային և կրօնական նկարագիր։ Բաւական է միայն յիշել, որ այդ վարժարաններու ուսուցիչներէն շատերը չեն պատկանիր հայ ազգութեան, որ հայերու հետ միասին ոչ-հայ երեխաներ ևս կը յաճախեն այդ վարժարաններէն մեծ մասը, ուր հայոց լեզուի ու կրօնի դասաւանդութիւնը դարձած է սոսկ ձևականութիւն մը։ Ռուսաստանի „հայ ծխական դպրոցները“ իրենց ներկայ դրութեան մէջ կը հանդիսանան ոչ թէ իբրև կրթական հիմնարկութիւններ, այլ իբրև ռուսացման նոր ձևի մը հիմնարկութիւններ, որոնք կը ձգտին ոչնչացնել հայութիւնը իր իսկ սեփական միջոցներովը։ Բացի այդ, չկայ ոչ մի երաշխաւորութիւն, թէ ռուս պաշտօնեաները չպիտի համարեն „ծխական դպրոցները“ համայն պետութեան ուսումնարաններ, ուր կը սովորին նաև մի քանի հայ մանուկներ, և հետևաբար ոչ ոք կարող է վստահ լինիլ, որ հայ եկեղեցական կալուածներու եկամուտով ռուսական կառավարութիւնը չպիտի հոգայ իր իսկ սեփական պէտքերը։

Ահա թէ ինչու յունիս 12-ի որոշումը հայերու կողմէն հանդիպեցաւ միահամուռ դիմադրութեան։ Ամբողջ հայ հոգևորականութիւնը, իրեն գլուխ ունենալով եկեղեցւոյ ալեզարդ պետը, և համայն հայ հասարակութիւնը, առանց խտրութեան կուսակցութիւններու, հասակի ու սեռի՝ որոշեցին չ'ընդունիլ այս ապօրինի կարգադրութիւնը և բողոքել սանձարձակ կամայականութեան դէմ։

Կաթողիկոսը հեռագրով ու նամակներով աղերսեց կայսր ի նկատի առնել իր բերած լուրջ բացատրութիւնները և յետաձգել յիշեալ որոշման իրագործումը։ Սինոդի անդամները, թեմական առաջնորդները հրաժարական տուին, անհնարին գտնելով իրենց պաշտօնավարութիւնը ներկայ պարագաներու մէջ։ Ռուսաստանի բոլոր քաղաքներուն և նոյնիսկ գիւղերուն հայ բնակչութիւնը արիւնահեղ ցոյցերով բողոքեց կատարուած աւազակութեան դէմ և մերժեց յանձնել կալուածները։ Ռուսիոյ դարաւոր տիրապետութեան ընթացքին մէջ առաջին անգամն էր որ Կովկասի մէջ հազարաւոր հայեր կուեցան բռնակալութեան դէմ, իրենց թափած արիւնովն ու կեանքի գնովը պաշտպանելու համար հայ ազգային իրաւունքները։

Ծերունի հայրապետին աղերսանքները մնացին ձայն բարբառոյ յանապատի։ Հայ հոգևորականութեան „ըմբոստութիւնը“ խորտակելու համար ռուսական Պլէվէի կառավարութիւնը նոր հրաման արձակեց, որով հոգևորական պաշտօններու մէջ հաստատուելու համար նախապէս կը պահանջուի Կովկասի կառավարչապետին կամ նահանգապետներուն հաճութիւնը. ահա՛ մի պարագայ ևս, որ նոր տեսակի չինովնիկութեան կը վերածէ հայ հոգևորականութիւնը, զայն կը դարձնէ կառավարութեան ձեռքին մէջ անվրէպ զէնք մը՝ անոր նպատակները իրագործելու համար։ Ժողովրդին արդար բողոքը խեղդելու նպատակով՝ հայաբնակ գլխաւոր քաղաքները յայտարարուած են զինուորական դրութեան մէջ. փակուած են քիչ թէ շատ արժանաւոր դիրք բռնող թերթերը, աքսորուած են ու կ'աքսորուին բողոքի նշոյլ ցոյց տուող հայերը, կը հալածուին հայկական դատի կենդանի ներկայացուցիչ-տաճկահայերը... Այսպէս, բռնութիւնն ըրաւ, ինչ որ կրնար ընել

Խաբէութեան միջոցաւ, մտրակի հարուածներու սարսափին տակ, զէնքի ուժով ձեւակերպուեցաւ թղթի վրայ կալուածներու մեծ մասին փոխանցումը։ Վայրագ պաշտօնեաները խորտակեցին Էջմիածնի գանձարանը և Մայր Աթոռի գումարները փակեցին Երևանի նահանգական գանձարանի մէջ։

Զրկուած ու կողոպտուած իր դարաւոր հարստութեան աղբիւրներու հասոյթներէն, հայ բարձր հոգևորականութիւնը մատնուած է ծանր կացութեան. Էջմիածնի ճեմարանը, թեմական դպրոցները պարտքով ու մասնաւոր հասոյթներով է միայն որ կը պահպանուին։

Ոչ ոքի յայտնի է, թէ ուր պիտի յանգի սկսուած պայքարը։

Մերժելով ստանալ տէրութեան յատիչտակած կալուածներուն եկամուտը, Ռուսաստանի մեր եղբայրները որոշած են շարունակել կռիւը։

Այս պարագաներուն մէջ պէտք է որ ուրիշ երկիրներու հայերն ևս մասնակից լինին ազգային շահերու պաշտպանութեան գործին։

Մէկ կողմ թողլով բողոքի այն ձևերը, որ մինչև այժմ հայ գաղութներու այլևայլ ժողովներն արտայայտեցին, ինչպէս և պ. Պօլսոյ պատրիարքարանին ռուսաց դեսպանատան միջոցաւ ներկայացուցած զեկուցագիրը, մենք այս գրութեամբ կ'ուզենք առաջարկել բողոքի մի նոր միջոց ոչ-ռուսահպատակ հայերուն, այն է՝ աշխատել կալուածական խնդիրը դնել Լահէի Միջազգային Ատեանին առջև։

Ռուսաստան գտնուող հայ եկեղեցական կալուածները, ինչպէս կը վկայէ Նոյնիսկ ռուս կառավարութեան կողմէ 1836 թուին կազմուած յատուկ կանոնադրութիւնը (Պօլժէնիէն), կը կազմեն սեփականութիւնը հայոց Հայութեան լուսաւորչական եկեղեցւոյն, այսինքն բոլոր լուսաւորչական հայերուն։ Ցիշեալ գոյքերուն մեծ մասը, հայ սրբավայրերուն անունով գնուած են աշխարհքիս բոլոր անկիւնները ցրուած բարեպաշտ հայերու անձուկ միջոցներովը։ Ռուսաստանի, Պարսկաստանի, Ցաճկաստանի հայերը նոյնչափ մասնակցած են այդ ազգային եկեղեցական հարստութեան գումարման, որչափ և Հնդկաստանի, Եգիպտոսի, Հոլանդայի, Ռումանիայի, Ֆրանսայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրներու հայերն ու անոնց նախահայրերը։ Հետևաբար այդ բոլոր հայերն ունին հաւասար իրաւասութիւն պահանջելու, որ յիշեալ գոյքերը գտնուին իրենց վստահութիւնը վայելող մարմնոյ մը հսկողութեանն ու տրամադրութեանը տակ, որպիսին բոլոր հայերու համար կը հանդիսանայ ներկայիս մէջ Էջմիածնայ Մայր Աթոռը։ Հակառակ պարագային ազգային այդ ամբողջ հարստութիւնը բաժանելու է բոլոր հայ եկեղեցական համայնքներու միջև։

Կալուածներու գրաւման փաստը կատարուելէ յետոյ, ահա այդ դատն է որ պիտի սկսին այսօր ոչ-ռուսահպատակ հայերը ռուս կառավարութեան դէմ. ադոր մասին է որ պէտք է խորհին ու գործեն բոլոր հայերը։

Լուսաբանելով խնդիրը իրենց տեղական տեսակէտներով ու փաստերով, հանդիսանալով իբրև մի հաւաքական կրօնական մարմին, զանազան երկիրներու մէջ ապրող հայերը պէտք է պաշտպանեն իրենց շահերը, բան մը, որ ներկայ պարագաներուն մէջ կը լինի և ընդհանուր ազգային շահերու պաշտպանութիւն։ Սակայն, պէտք չէ մոռնալ որ ոևէ հետևանքի հասնելու համար անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր մի երկրում հայերու շահերուն պաշտպանութիւնը յանձն առնէ այդ երկրի կառավարութիւնը, որը միայն կարող է դիմել Լահէի բարձրագոյն Ատեանին պաշտօնապէս։

Իրագործելու համար այդ՝ անհրաժեշտ է խորհրդակցութիւն ու համաձայնութիւն ամէն մի երկրի հայութեան մէջ. պէտք է լուրջ, փաստաբանուած խնդրագիր ներկայացնել երկրի կառավարութեան և հաւաքել ըստ կարելւոյն շատ ստորագրութիւններ. ադկէ զատ պէտք է նաև ընտրել վստահելի մարմին մը, որ կարենայ եռանդուն կերպով հարցն առաջ մղել։

Մեր կողմէն կրնանք հաղորդել, որ միջազգային իրաւաբանական խնդիրներուն տեղեակ անձեր յուսադրած են մեզ, որ յարուցելիք խնդիրը կրնայ ունենալ որոշ քաղաքական հետևանքներ, եթէ պետութիւններէն գոնէ մին (Անգլիա, Ամերիկա, Հոլանդա կամ մի ուրիշը) համաձայնի նախաձեռնարկ լինելը։

Վստահ ենք, յարգելի հայրենակիցներ, որ ազգային այս հրատապ խնդրոյն առջև, մէկ կողմ թողլով կուսակցական բաժանումները, ամէնքդ պիտի գործէք ձեռք ձեռքի տուած, ընդհանուր ուժով պաշտպանելու համար մեր ընդհանուր ազգային շահերը։

Կը յուսայ և կը վստահի ձեր շրջահայեցութեան ու անկեղծ հայրենասիրական զգացմունքներուն վրայ

Հ. Ց. Դ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ